**Լ Ր Ա Ց Ո Ւ Ց Ի Չ   Օ Ր Ա Կ Ա Ր Գ**

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նիստի (N 4)**

05 ապրիլի 2013թ. ժամը 15$^{\underline{00}}$

1. «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեղծագործական տեխնոլոգիաների երիտասարդական կենտրոն-Դիլիջան» ծրագրի մասին:
(Մարի Լու Փափազյան)

**2. Բարեգործական բեռների ներմուծման և բաշխման մասին**
(Արման Բարխուդարյան)

2.1 Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:

2.2 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի հունվարի 30-ի N Մ-032-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամ):

2.3 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի դեկտեմբերի 21-ի N Մ-1064-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռնի ներմուծման մասին («Տիրամայր հայաստան կուսաստան» բարեգործական կազմակերպություն):

2.4 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի մարտի 13-ի N Մ-278-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռների ներմուծման մասին («Հայկական ակնաբուժական նախագիծ» բարեգործական հիմնադրամ):

2.5 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի փետրվարի 15-ի N Մ-070-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Առաքելություն Արևելք» մարդասիրական օգնության կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ):

2.6 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 15-ի N Մ-173-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու և նույն որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամ):

**3. Հաստատված բարեգործական ծրագրերին հարակից գործարքների մասին**
(Արման Բարխուդարյան)

3.1 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 15-ի N Մ-173-Ա, N Մ-175-Ա և N Մ-177-Ա որոշումներով հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամ):



3.2 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 28-ի N Մ-120-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Սեյվ դը չիլդրեն ինթերնեշնլ» հայաստանյան ներկայացուցչություն):

3.3 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի նոյեմբերի 25-ի N Մ-1063-Ա որոշմամբ հաստատված ծրագրում փոփոխություններ կատարելու և նույն ծրագրին հարակից գործարքի մասին («Այբ» կրթական հիմնադրամ):

**4. Այլ հարցեր**

4.1 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի փետրվարի 15-ի N Մ-113-Ա որոշմամբ հաստատված ծրագրում փոփոխություն կատարելու մասին («Երևանի Ռոտարի ակումբ» հասարակական կազմակերպություն):

4.2 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 17-ի N Մ-490-Ա որոշման մեջ ու կից ծրագրում փոփոխություն կատարելու մասին («Երևան իմ սեր» հիմնադրամ):

***ՆԱԽԱԳԻԾ***

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**___ մարտի 2013 թվականի N Մ - -Ա**
**քաղ. Երևան**

**«ՍԻՄՈՆՅԱՆ» ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ - ԴԻԼԻՋԱՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի մարտի -ի N 3/3.8-1/-13, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2013 թվականի մարտի -ի N -13, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության 2013 թվականի մարտի -ի N -13, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2013 թվականի մարտի -ի N -13, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի մարտի -ի N ՎՄ/3-8/-13 և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2013 թվականի մարտի -ի N -13 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Հալաբյան 16, ՀՎՀՀ՝ 01245672) իրականացվող՝ 32 մլն դրամ ընդհանուր արժողությամբ «Ստեղծագործական տեխնոլոգիաների երիտասարդական կենտրոն - Դիլիջան» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Պիկ լիցեյում» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00804437) 2013 թվականի հունվարի 29-ին կնքված՝ N 01/13 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է համակարգչային նստարանների համար տարրերի պատրաստման աշխատանքների իրականացում՝ 242100 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի

2) «Պիկ լիցեյում» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00804437) 2013 թվականի հունվարի 29-ին կնքված՝ N 02/13 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է համակարգչային սեղանների համար տարրերի պատրաստման աշխատանքների իրականացում՝ 385000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:



3. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից ձեռք բերված խաղալիքների հավաքածուները և հոսանքի անխափան սնուցման սարքերը (մեկ տեղ, 24 կգ ընդհանուր քաշով, 1676.10 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծվում են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի շրջանակներում:

4. «Սիմոնյան» կրթական հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

5. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետին և Դիլիջանի քաղաքապետին:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Սիմոնյան կրթական հիմնադրամի
գլխավոր տնօրեն Մարի Լու Փափազյանի կողմից
«03» Ապրիլի 2013թ.

«Ստեղծագործական տեխնոլոգիաների երիտասարդական կենտրոն - Դիլիջան»
ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է կրթության միջոցով աջակցել ՀՀ Տավուշի մարզի, մասնավորապես Դիլիջան քաղաքի մրցունակ մարդկային ներուժի զարգացմանը՝ հասանելի դարձնելով երիտասարդներին, ուսանողներին տեխնոլոգիական ռեսուրսները, ինչպես նաև առանձին խորացված դասընթացների միջոցով ուժեղացնել ծրագրի շահառուների հետազոտման և մշակման ունակությունները: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից |
| 3. | Բարեգործը | «Տնտեսագիտական կրթության և հետազոտությունների աջակցման կենտրոն» հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Վ. Սարգսյան 6, ՀՎՀՀ՝ 02710011) |
| 4. | Ծրագիրը կատարողը | Սիմոնյան կրթական հիմնադրամի ( ՀՀ ք.Երևան, Հալաբյան 16, ՀՎՀՀ 01245672) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագիրը իրականացվելու է ՀՀ Տավուշի մարզում՝ Դիլիջան քաղաքի Մյասնիկյան 63 հասցեում, կրթության բնագավառ: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 32000000 (երեսուներկու միլիոն) դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Ծրագրի շահառուներն են՝ 12-ից 18 տարեկան երիտասարդները, որոնք ուղղակիորեն կօգտվեն |

2

| | | |
|---|---|---|
| | | ծրագրի երիտասարդական կենտրոնի բաղադրիչից: Ծրագիրը բաց կլինի նման բոլոր շահառուների համար անվճար, որոնք ինքնուրույն կամ ծնողների միջոցով հետաքրքրություն կցուցաբերեն ծրագրի շրջանակներում մատուցվող կրթական գործունեությանը: Ծրագիրը հասանելի կլինի բոլոր երիտասարդներին, որոնք ի վիճակի կլինեն ձեռք բերել ծրագրի հարմարություններից օգտվելու իրավունքը բաց անդամագրության շնորհիվ: Ծրագիրը հերթափոխության միջոցով տարվա ընթացքում կարող է հյուրընկալել մինչև հազար երիտասարդներ, այն կգործի գրեթե արտադասարանային ակումբների ոճով սակայն յուրօրինակ կրթական նպատակներով: Վատագույն դեպքում, երբ ծրագրի կարողությունները կլինեն գերբեռնված, մասնակիցները կընտրվեն բաց մրցույթի միջոցով: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը իրականացվում է երկու փուլով 2013թ-ի Հունվարի 15-ից մինչև 2013թ-ի դեկտեմբերի 5-ը ներառյալ: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագիրը իրականացվելու է երկու փուլով<br><br>**Փուլ 1.** 1-ին փուլով իրականացվելու է Ծրագրի ընթացիկ ծախսերը: 1-ին փուլը սկսվում է 2013թ-ի Հունվարի 15-ից և ավարտվում 2013թ-ի դեկտեմբերի 5-ին: 1-ին փուլի բյուջեն կազմում է 13416000 (տասներեք միլիոն չորս հարյուր տասնվեց հազար) ՀՀ դրամ, որը բաղկացած է հետևյալից՝<br>1) ուղղակիորեն շահառուներին սպասարկող անձնակազմին վճարվելիք աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ - 10741350 (տաս միլիոն յոթ հարյուր քառասունմեկ հազար երեք հարյուր հիսուն) դրամ.<br>2) վերապատրաստման ծախսեր – 802650 (ութ հարյուր երկու հազար վեց հարյուր հիսուն) դրամ.<br>3) հատուկ դասընթացներ և միջոցառումներ – 1200000 (մեկ միլիոն երկու հարյուր հազար) դրամ.<br>4) գրասենյակային և այլ ծախսեր - 672000 (վեց հարյուր յոթանասուներկու հազար) դրամ: |

| | | |
|---|---|---|
| | | **Փուլ 2.** 2-րդ փուլով ձեռք են բերվելու Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ սարքավորումներ, համակարգչային ծրագրեր և հարմարանքներ: 2-րդ փուլը սկսվում է 2013թ-ի հունվարի 25-ից և ավարտվում 2013թ-ի հուլիսի 7-ին:<br>1-ին փուլի բյուջեն կազմում է 17000000 (տասնյոթ միլիոն) դրամ, որը բաղկացած է հետևյալից՝<br>1) համակարգչային տեխնիկա և աքսեսուարներ – 3309130 (երեք միլիոն երեք հարյոր ինը հազար մեկ հարյուր երեսուն) դրամ.<br>2) համակրագչային ծրագրեր - 4487110 (չորս միլիոն չորս հարյուր ութսունյոթ հազար մեկ հարյուր տաս) դրամ.<br>3) գրասենյակային կահույք, երաժշտական և խաղային սարքավորումներ – 3386580 (երեք միլիոն երեք հարյուր ութսունվեց հազար հինգ հարյուր ութսուն) դրամ.<br>4) սարքեր, սարքավորումներ և հարմարանքներ - 4335240 (չորս միլիոն երեք հարյուր երեսունհինգ հազար երկու հարյուր քառասուն) դրամ.<br>5) տրանսպորտային, մաքսային և այլ ծախսեր – 1481940 (մեկ միլիոն չորս հարյուր ութսունմեկ հազար ինը հարյուր քառասուն) դրամ: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | 1) Համակարգչային տեխնիկա և աքսեսուարներ՝<br>- 3135130 (երեք միլիոն մեկ հարյոր երեսունհինգ հազար մեկ հարյուր երեսուն) դրամ: Նախատեսվում է ձեռք բերել արտերկրից մինչև 07.07.2013թ-ը.<br>- 174000 (մեկ հարյուր յոթանասունչորս հազար) դրամ: Նախատեսվում է ձեռք բերել ՀՀ-ում մինչև 07.07.2013թ-ը:<br>2) Սարքեր, սարքավորումներ և հարմարանքներ - 4335240 (չորս միլիոն երեք հարյուր երեսունհինգ հազար երկու հարյուր քառասուն) դրամ: Նախատեսվում է ձեռք բերել արտերկրից մինչև 07.07.2013թ-ը:<br>3) Համակարգչային ծրագրեր՝<br>- 3839580 (երեք միլիոն ութ հարյուր երեսունինը հազար հինգ հարյուր ութսուն) դրամ: Նախատեսվում է ձեռք բերել արտերկրից մինչև 07.07.2013թ-ը:<br>- 647530 (վեց հարյուր քառասունյոթ հազար հինգ հարյուր երեսուն) |



| | | |
|---|---|---|
| | | դրամ: Նախատեսվում է ձեռք բերել ՀՀ-ում մինչև 07.07.2013թ-ը:<br>4) Գրասենյակային կահույք, երաժշտական և խաղային սարքավորումներ՝<br>- 2986580 (երկու միլիոն ինը հարյուր ութսունվեց հազար հինգ հարյուր ութսուն) ՀՀ դրամ: Նախատեսվում է ձեռք բերել արտերկրից մինչև 07.07.2013թ-ը.<br>- 400000 (չորս հարյուր հազար) ՀՀ դրամ: Նախատեսվում է ձեռք բերել ՀՀ-ում մինչև 07.07.2013թ-ը:<br>5) Այլ ապրանքներ և ծառայություններ՝<br>- 1200000 (մեկ միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ: Նախատեսվում է ձեռք բերել արտերկրից մինչև 07.07.2013թ-ը,<br>- 953940 (ինը հարյուր հիսունհերեք հազար ինը հարյուր քառասուն) դրամ: Նախատեսվում է ձեռք բերել ՀՀ-ից մինչև 07.07.2013թ-ը:<br>Ծրագրի շրջանակներում ձեռք են բերվել՝<br>- «Պիկ Լիցեյում» ՓԲԸ-ից - համակարգչային սեղանների համար տարրեր թվով չորս հատ՝ 385000 դրամ արժողությամբ, առանց ԱԱՀ-ի.<br>- «Պիկ Լիցեյում» ՓԲԸ-ից - համակարգչային նստարանների համար տարրեր թվով չորս հատ՝ 242100 դրամ արժողությամբ, առանց ԱԱՀ-ի.<br>- Իսպանական Ro-botica ընկերությունից - Լեգո խաղալիք ռոբոտներ՝ 1676.10 եվրո ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ կազմակերպչական ծախսերը՝ գործուղման ծախսեր, կազմում են 1584000 (մեկ միլիոն հինգ հարյուր ութսունչորս հազար) դրամ: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագրի շրջանակներում նախատեսվում է համագործակցություն ՀՀ կրթության և գիտության ու ՀՀ էկոնոմիկայի նախարարությունների հետ: |

| | | |
|---|---|---|
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագիրը կմշակի իր գործունեության արդյունավետության գնահատման ներքին հսկողության համակարգ և պարբերաբար աուդիտի կենթարկվի անկախ աուդիտորի կողմից: ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը՝ հաշվետվությունների տեսքով: |

Կազմեց՝ Արամ Նարիմանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

18.03.2013թ. № 3/3.8-1/3424-13

Ձեր № ________________

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր- Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 12.03.13թ. N 15/15.6/3335-13 գրության՝ կապված «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեղծագործական տեխնոլոգիաների երիտասարդական կենտրոն-Դիլիջան» ծրագրի մասին» ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ ծրագրի 7-րդ կետում անհրաժեշտ է նշել, թե շահառուները ինչ կարգով են օգտվելու՝ վճարովի, թե անվճար:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

034/6581-13
18.03.2013թ.

Կատարող՝ Ն. Հարությունյան, հեռ. 595-229

N· 4/1

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

*0078 Երևան, Հալաբյան 41 ա, հեռ. 380385*
*էլ. փոստ՝ grigor.mouradian@justice.am*

N: 02/1490-13
19.03.2013թ.

**Հայաստանի Հանրապետության կառավարության**
**բարեգործական ծրագրերի համակարգման**
**հանձնաժողովի նախագահ**
**պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

**Ի կատարումն ՀՀ կառավարության 2013թ. մարտի 12-ի**
**15/15.6/3335-13 թվակիր հանձնարարականի**

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Հայտնում ենք, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեղծագործական տեխնոլոգիաների երիտասարդական կենտրոն-Դիլիջան» ծրագրի դրույթներն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Բարեգործության մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի «Բարեգործական ծրագրերի մասին» թիվ 66-Ն որոշման պահանջներին, մասնավորապես՝ ծրագրում առկա են հստակեցման կարիք ունեցող դրույթներ: Այսպես՝ ծրագրի 1-ին կետում նշված է, որ ծրագրի նպատակն է աջակցել Դիլիջան քաղաքի մրցունակ մարդկային ներուժի զարգացմանը՝ տեխնոլոգիական ռեսուրսները հասանելի դարձնելով երիտասարդներին, ուսանողներին և արհեստավարժներին, մինչդեռ պարզ չէ, թե արհեստավարժներն ովքեր են: Ծրագրի 1-ին կետում խոսք է գնում նաև հետազոտման և մշակման ուղղությունների ուժեղացման մասին, մինչդեռ հստակեցման կարիք ունի, թե ծրագրի շրջանակներում ինչ է մշակվելու և հետազոտվելու:

**Հարգանքով՝** **Գ. Մուրադյան**

035/6752-13
19.03.2013թ.

Կատարող՝ Իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Ա. Ստեփանյան, հեռ՝. 380-227

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

N· 4/1

0010, ք.Երևան-10, Մ.Մկրտչյան 5.
Հեռ. 56-61-85. Ֆաքս 52-65-77
Էլ. փոստ: secretariat@mineconomy.am
Վեբ կայք: www.mineconomy.am

Ձեր № 15/15.6/3335-13
2013-03-13

N: 01/21.2/1334-13
19.03.2013թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր գրության հայտնում ենք, որ ««Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեղծագործական տեխնոլոգիաների երիտասարդական կենտրոն-Դիլիջան» ծրագրի մասին»» Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ առարկություններ և առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ԴԱՎԹՅԱՆ

033/6738-13
19.03.2013թ.

Կատարող՝ Արման Մկրտչյան
597-191

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ
И НАУКИ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION
AND SCIENCE

DEPUTY MINISTER

Մ. 4/1

0010, Երևան, Գլխավոր պողոտա, կառավարական տուն 3, Հեռ./Тел./Tel.: 58 03 02, ֆաքս/факс/fax (374 10) 52 73 43,
0010, Ереван, Главный проспект, Дом правительства 3, 0010, Main Avenue, Government House 3, Yerevan, E-mail: miens@edu.am, www.edu.am

N 03/07-1/2701-13 " 15 " 03 2013

*ՀՀ կառավարության բարեգործական*
*ծրագրերի համակարգման հանձնաժողովի*
*նախագահ պարոն Ս.Տեր-Սիմոնյանին*

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր սույն թվականի մարտի 12-ի №15/15.6/3335-13 գրության՝ հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեղծագործական տեխնոլոգիաների երիտասարդական կենտրոն - Դիլիջան» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ ՀՀ կրթության և գիտության նախարարությունը իր իրավասության շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունի:

*ՀԱՐԳԱՆՔՈՎ՝* *Մ.ՄԿՐՏՉՅԱՆ*

*կատ. Ն.Սահակյան*
*հեռ. 524777*

031/6555-13
15.03.2013թ.

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

Մ. 4/1

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
Հեռ. 50 20 20, 060 54 43 03

№ ՆԱ/3-8/2662-13
15.03.2013թ.

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 12.03.2013թ. թիվ 15/15.6/3335-13 գրությանը կից ներկայացված ««Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեղծագործական տեխնոլոգիաների երիտասարդական կենտրոն - Դիլիջան» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ.

Կից ներկայացված ծրագրի 9-րդ կետում 2-րդ փուլը սկսվում է 2012թ. դեկտեմբերի 6-ից, այնինչ ծրագրի իրականացման սկիզբը սահմանված է 2013 թվականի հունվարի 15-ը, և 1-ին փուլը, ըստ 9-րդ կետի, ավարտվում է 2013թ.-ի հունվարի 7-ին:

Ելնելով վերոգրյալից՝ հայտնում եմ, որ եթե նշվածը վրիպակ է, ապա այն անհրաժեշտ է ուղղել:

Հարգանքով՝

Վ. Միրումյան

Անուղղակի հարկերի բաժին, հեռ. 060 544652

044/6545-13
15.03.2013թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ
ՄԱՐԶՊԵՏ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
ТАВУШСКАЯ ОБЛАСТЬ
ГУБЕРНАТОР

REPUBLIC OF ARMENIA
TAVUSH REGION
GOVERNOR

4001, ՀՀ ք. Իջևան Սահմանադրության 1, РА, г. Иджеван Сагманадрутян 1, RA, Ijevan Sahmanadrutyan 1
հեռ.тел.phon. /0263/ 4-00-45, 3-23-56 Ֆաքս /факс, fax / /0263/ 4-00-45
E-mail: tavush@mta.gov.am Կայք WEB http://tavush.gov.am

Հր. 4/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ- ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ա/Հ 01/21.1/1111-13
19.03.2013թ.

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Հայաստանի Հանրապետության կառավարության 2003թ. հունվարի 16-ի N66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 13-րդ կետի համաձայն, Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեղծագործական տեխնոլոգիաների երիտասարդական կենտրոն - Դիլիջան» ծրագրի մասին որոշման նախագիծը քննարկվել է Տավուշի մարզպետարանում և արժանացել հավանության:

Որոշման նախագծի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չկան:

Հարգանքով

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ

կատ. Գ. Հարությունյան
հեռ 0/263/ 3-45-61

119/6779-13
19.03.2013թ.

Հր. 4/1

# ՏԵՂԵԿԱՆՔ

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեղծագործական տեխնոլոգիաների երիտասարդական կենտրոն - Դիլիջան» ծրագրի մասին» որոշման նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ**

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
| --- | --- |
| **ՀՀ ֆինանսների նախարարության դիտողությունների ու առաջարկությունների վերաբերյալ** | |
| ծրագրի 7-րդ կետում անհրաժեշտ է նշել, թե շահառուները ինչ կարգով են օգտվելու՝ վճարովի, թե անվճար | Հաշվի է առնվել, ծրագիրը լրամշակվել է: Կազմակերպության գրությունը կցվում է: |
| **ՀՀ արդարադատության նախարարության դիտողությունների ու առաջարկությունների վերաբերյալ** | |
| Այսպես՝ ծրագրի 1-ին կետում նշված է, որ ծրագրի նպատակն է աջակցել Դիլիջան քաղաքի մրցունակ մարդկային ներուժի զարգացմանը՝ տեխնոլոգիական ռեսուրսները հասանելի դարձնելով երիտասարդներին, ուսանողներին և արհեստավարժներին, մինչդեռ պարզ չէ, թե արհեստավարժներն ովքեր են: Ծրագրի 1-ին կետում խոսք է գնում նաև հետազոտման և մշակման ուղղությունների ուժեղացման մասին, մինչդեռ հստակեցման կարիք ունի, թե ծրագրի շրջանակներում ինչ է մշակվելու և հետազոտվելու: | Հաշվի է առնվել, ծրագիրը լրամշակվել է: Կազմակերպության գրությունը կցվում է: |
| **ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի դիտողությունների ու առաջարկությունների վերաբերյալ** | |
| Կից ներկայացված ծրագրի 9-րդ կետում 2-րդ փուլը սկսվում է 2012թ. դեկտեմբերի 6-ից, այնինչ ծրագրի իրականացման սկիզբը սահմանված է 2013 թվականի հունվարի 15-ը, և 1-ին փուլը, ըստ 9-րդ կետի, ավարտվում է 2013թ.-ի հունվարի 7-ին: Ելնելով վերոգրյալից՝ հայտնում եմ, որ եթե նշվածը վրիպակ է, ապա այն անհրաժեշտ է ուղղել: | Հաշվի է առնվել, ծրագիրը լրամշակվել է: Կազմակերպության գրությունը կցվում է: |

# Սիմոնյան կրթական հիմնադրամ
# Simonian educational foundation

մ. 4/1

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Բարեգործական որակման նպատակով, Ձեզ եմ ուղարկում Ստողծագործական տեխնոլոգիաների երիտասարդական կենտրոն - Դիլիջան» Ծրագրի լրամշակված տարբերակը ` հաշվի առնելով ՀՀ ֆինանսների նախարարության, ՀՀ արդարադատության նախարարության և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ծրագրի վերաբերյալ ներկայացված դիտողությունները:

Առդիր՝ 5 թերթ

Սիմոնյան Կրթական Հիմնադրամի տնօրեն՝

Մարի Լու Փափազյան
03/04/2013

094-8142
03 04 2013 թ.

678

ՀՀ, Երևան 0038, Հալաբյան 16, հեռ. +374 10 398413
RA,Yerevan 0038, Halabyan 16, tel. +374 10 398413

<u>ՆԱԽԱԳԻԾ</u>

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**մարտի 2013 թվականի N Մ - - Ա** մ. 4/2.1
**քաղ. Երևան**

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի մարտի -ի N և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի մարտի -ի N եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Բարեգործական որակել Հայկական բարեգործական ընդհանուր միության միջոցներով Իտալիայից Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված օդակարգավորիչների (40 տեղ, 1883.5 կգ ընդհանուր քաշով, 30923.09 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման և այլ ծախսերը կազմել են 4967 եվրո, ՄԾՓ Տ/Մ) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսված է Մայր Աթոռի հին վարչական շենքի համար:

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ**

ՃԻ 4/2.1

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

29.03.13թ. №31/3.8-2/4154-13

Ձեր № ____________________

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ՝ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 26.03.2013թ. N 15/15.8/4082-13 գրության՝ կապված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան/

Կատարող՝ Մ. Հարությունյան, հեռ. 595-227

29.03.13թ.
№ 034/7746-13

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ**
**ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**

**ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ**

ՃԻ 4/2.1

№ ՂՄ/3-6/3361-13
2.04.2013թ

ք. Երևան-0015, Մ. Խորենացի 3, 7

**ՀՀ կառավարության բարեգործական**
**ծրագրերի համակարգման**
**հանձնաժողովի նախագահ**
**պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր ս/թ. մարտի 26-ի թիվ 15/15.8/4082-13 գրությամբ կարծիքի ներկայացված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Վ. ՄԻՐՈՒՄՅԱՆ

*Կատարող՝ Ա. Ամիրյան*
*Միջազգային հարաբերությունների բաժին*
*Հեռ. 060 54 43 49*

044/7883-13
2.04.2013թ

**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**2013 թվականի N Մ- -Ա**
**քաղ. Երևան**

4/2.2

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 30-Ի N Մ-032-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ԱՐԱԲԿԻՐ» ՄԻԱՑՅԱԼ ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի -ի N 3/3.8-2/ -13, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2013 թվականի -ի N ԴԴ/22/ -13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի -ի N ՎՄ/3-6/ -13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Շվեյցարիայի ՍԵՄՌԱ Պլյուս հիմնադրամի կողմից «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված Ազատիոպրին դեղամիջոցը (1 տեղ, 1.29 կգ ընդհանուր քաշով, 576 եվրո արժողությամբ, բեռնափոխադրման և այլ ծախսերը կազմում են 109.2 եվրո, ՄՓԵւՍԱՓԱՄ մաքսատուն) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի հունվարի 30-ի «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից 2009-2013 թվականներին իրականացվող «Ազգաբնակչության առողջության պահպանմանը և բժշկասոցիալական զարգացմանն աջակցություն» ծրագրի մասին» N Մ-032-Ա (2011 թվականի նոյեմբերի 25-ի N Մ-1025-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ**

4/2.2

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

29.03.13 №3.1/3.8-2/4222-13

Ձեր №

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ՝ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 28.03.2013թ. N 15/15.1/4224-13 գրության՝ կապված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի հունվարի 30-ի N Մ-032-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան/

034/7830-13

Կատարող՝ Մ. Հարությունյան, հեռ. 595-227

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

մ. 4/2.2

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3
հեռ. (+ 374 10) 58 24 13
ֆաքս (+ 374 10) 52 68 44
էլ. փոստ minister@moh.am

03.04.13 N 07/22/3658-13

Ձեր N ____________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 28.03.2013թ. թիվ 15/15.1/4224-13 գրության կապակցությամբ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի հունվարի 30-ի N Մ-032-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ, որ ՀՀ առողջապահության նախարարությունն իր իրավասության շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ԴԵՐԵՆԻԿ ԴՈՒՄԱՆՅԱՆ

Կատարող՝ Էդուարդ Էքմեքջյան
ՀՀ ԱՆ աշխատակազմի դեղորայքային քաղաքականության բաժին
հեռախոս 52 27 21

020/8117-13

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

մ. 4/2.2

ք. Երևան-0015, Մ. Խորենացի 3, 7

ՎՄ/3-6/3355-13
02.04.13

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր ս/թ. մարտի 28-ի համար 15/15.1/4224-13 գրությամբ կարծիքի ներկայացված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի հունվարի 30-ի N Մ-032-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Վ. ՄԻՐՈՒՄՅԱՆ

044/7874-13

*Կատարող՝ Ա. Ամիրյան*
*Միջազգային համագործակցության բաժին*
*Հեռ. 060 54 43 49*

<u>ՆԱԽԱԳԻԾ</u>

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ու Մ

**ապրիլի 2013 թվականի N Մ-          -Ա** 4/2.3

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N Մ-1064-Ա ԵՎ N Մ-1065-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ՏԻՐԱՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՍԱՍՏԱՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի -ի N 3.1/3.8-2/ -13, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2013 թվականի -ի N ՖԲ/ԱնՄ-5/ -13 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի -ի N ՎՄ/3-6/ -13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Լիբանանից անհատ բարերար Վազգեն Հակոբյանի կողմից «Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպության հասցեով ուղարկված բեռը (3569 կգ ընդհանուր քաշով, 54663 ԱՄՆ-ի դոլար արժեքով, փոխադրման ծախսերը կազմում են 4100 ԱՄՆ-ի դոլար, բեռի և բաշխման ցանկերը կցվում են, Շիրակի տարածաշրջանային մաքսատուն) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի դեկտեմբերի 21-ի «Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպության կողմից իրականացվող «Պողոսյան կրթահամալիր» ծրագրի մասին» N Մ-1064-Ա և Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի դեկտեմբերի 21-ի «Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպության կողմից իրականացվող «Ամառային ճամբար» ծրագրի մասին» N Մ-1065-Ա որոշումներով հաստատված ծրագրերի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

## ԱՆԱՐԱՏ ՀՂՈՒԹՅԱՆ ՀԱՅ ՔՈՒՅՐԵՐԻ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՏԻՐԱՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՍԱՍՏԱՆԻ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՎԵԼԻՔ ԲԵՌԻ ԲԱՇԽՄԱՆ ՑՈՒՑԱԿ

4/2.3

Container MEDU 3537110/20`DV

| Հ/Հ | Ստացող կազմակերպություն | Քանակ (արկղ, կգ, հատ, զույգ) | Արկղի պարունակություն | Ապրանքի անվանում | Միավորի արժեք $ | Ընդհանուր արժեք $ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Տիրամայր Հայաստանի ճամբար (մոտ 3000 շահառու) N Մ-1065-Ա 21.12.2012 | 79 | 8 արկղ (16 հատ) | օդափոխիչ դիֆուզոր | 140.00 | 1 120.00 |
| | | | 1 արկղ (1 հատ) | գրիլ | 80.00 | 80.00 |
| | | | 2 արկղ (4 հատ) | մաքուր օդ փչող | 140.00 | 560.00 |
| | | | 8 արկղ (8 հատ) | կարգավորիչ | 90.00 | 720.00 |
| | | | 6 արկղ (6 հատ) | կարգավորիչ | 475.00 | 2 850.00 |
| | | | 4 արկղ (4 հատ) | հովհար | 1125.00 | 4 500.00 |
| | | | 1 արկղ (1 հատ) | էլեկտրակառավարման վահանակ | 810.00 | 810.00 |
| | | | 1 արկղ (6 հատ) | արագության կարգավորիչ | 30.00 | 180.00 |
| | | | 28 արկղ (840 հատ) | հագուստ | | 150.00 |
| | | | 5 արկղ (500 հատ) | գրենական պիտույք | 0.15 | 75.00 |
| | | | 5 արկղ (150 հատ) | խաղալիք | 0.50 | 75.00 |
| | | | 4 արկղ (4 հատ) | LED լամպեր | 175.00 | 700.00 |
| | | | 6 արկղ (6 հատ) | կլոր հալոգենային լամպեր | 100.00 | 600.00 |
| Ընդամենը | | 79 | --- | --- | --- | 12 420.00 |

## ԱՆԱՐԱՏ ՀՂՈՒԹՅԱՆ ՀԱՅ ՔՈՒՅՐԵՐԻ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՏԻՐԱՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՍԱՍՏԱՆԻ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՎԵԼԻՔ ԲԵՌԻ ԲԱՇԽՄԱՆ ՑՈՒՑԱԿ

Container MEDU 3537110/20`DV

Հ. 4/2.3

| Հ/Հ | Ստացող կազմակերպություն | Քանակ (արկղ, կգ, հատ, զույգ) | Արկղի պարունակություն | Ապրանքի անվանում | Միավորի արժեք $ | Ընդհանուր արժեք $ |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | Տիրամայր Հայաստանի կենտրոն (մոտ 500 շահառու) N Մ-1064-Ա 21.12.2012 | 7 հատ | 1 հատ | հաց եփելու փուռ | 5802.00 | 5802.00 |
| | | | 1 հատ | խմորհունց | 2232.00 | 2232.00 |
| | | | 1 հատ | հարիչ | 247.00 | 247.00 |
| | | | 1 հատ | ուղղահայաց խառնիչ | 1790.00 | 1790.00 |
| | | | 2 հատ | սայլակ | 266.5 | 533.00 |
| | | | 1 հատ | խնձոր մաքրող հարմարանք | 00 | 00 |
| 2. | Տիրամայր Հայաստանի ճամբար (մոտ 3000 շահառու) N Մ-1065-Ա 21.12.2012 | 18 | 1 հատ | գազօջախ | 4224.00 | 4224.00 |
| | | | 1 հատ | օդափոխիչ | 2903.00 | 2903.00 |
| | | | 4 հատ | սեղան՝ լվացարանով և ծորակով | 1993.5 | 7974.00 |
| | | | 2 հատ | հարիչ OEM | 2918.00 | 5836.00 |
| | | | 4 հատ | չժանգոտվող պահարան | 1045.00 | 4180.00 |
| | | | 1 հատ | կարտոֆիլ մաքրող մեքենա | 2693.00 | 2693.00 |
| | | | 1 հատ | տապակելու կարտոֆիլ շերտավորող | 482.00 | 482.00 |
| | | | 1 հատ | միկրոալիքային վառարան | 483.00 | 483.00 |
| | | | 1 հատ | ավտոմատ ջրատաքացուցիչ | 1311.00 | 1311.00 |
| | | | 2 հատ | աղբաման | 776.50 | 1553.00 |
| Ընդամենը | | 25 | --- | --- | --- | 42243.00 |


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

Հ. 4/2.3

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26


3.04.13 №3/3.8-2/4370-Կ

Ձեր №

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ՝ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 29.03.2013թ. N 15/15.1/1341-13 գրության՝ կապված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի դեկտեմբերի 21-ի N Մ-1064-Ա և N Մ-1065-Ա որոշումներով հաստատված ծրագրերի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպության)» որոշման նախագծի հետ հայտնում ենք, հետևյալը, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

034/8170-13

Կատարող՝ Մ. Հարությունյան, հեռ. 595-227

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ**
**ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**

**ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ** ԱՐ 4/2.3

ք. Երևան-0015, Մ. Խորենացի 3, 7

ԿԱ/3-6/3385-13
2.04.13

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր ս/թ. մարտի 29-ի համար 15/15.1/4311-13 գրությամբ կարծիքի ներկայացված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի դեկտեմբերի 21-ի N Մ-1064-Ա և N Մ-1065-Ա որոշումներով հաստատված ծրագրերի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպություն)» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Վ. ՄԻՐՈՒՄՅԱՆ

044/7880-13

*Կատարող՝ Ա. Ամիրյան*
*Միջազգային համագործակցության բաժին*
*Հեռ. 060 54 43 49*

---

**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**---- ------------ 2013 թվականի N Մ- -Ա** ԱՐ 4/2.4
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 13-Ի N Մ-278-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի մարտի 28-ի N 3.1/3.8-2/4157-13, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի ապրիլի 2-ի N ԿԱ/3-6/3356-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Հայկական ակնաբուժության նախագիծ» կորպորացիայի կողմից ուղարկված՝ «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամի հասցեով ԱՄՆ-ից ստացված բեռը՝ (էնդոսկոպիկ սարքավորման մաս կազմող – E4OME4000 համակարգը 1 տեղ, 20 կգ ընդհանուր քաշով, 6200 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ներառյալ փոխադրման ծախսերը, «ՄՓ և ՍԱՓԱՄ ՄՏ») ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի ապրիլի 13-ի «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող՝ «Լույս՝ հայի աչքերին» (վեցերորդ փուլ) ծրագրի մասին» N Մ-278-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ**

Ա 4/2.4

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

28.03.13թ. №31/3.8-2/4157-13

Ձեր № ____________

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ՝ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 27.03.2013թ. N 15/15.4/4116-13 գրության՝ կապված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի ապրիլի 13-ի N Մ-278-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամ) որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան/

N 034/7703-13
28.03.13

Կատարող՝ Մ. Հարությունյան, հեռ. 595-227

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ**
**ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**

**ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ** Ա 4/2.4

ք. Երևան-0015, Մ. Խորենացի 3, 7

N Վ/Ա/3-6/3356-13
02.04.13թ

**ՀՀ կառավարության բարեգործական**
**ծրագրերի համակարգման**
**հանձնաժողովի նախագահ**
**պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր ս/թ. մարտի 27-ի թիվ 15/15.4/4116-13 գրությամբ կարծիքի ներկայացված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի ապրիլի 13-ի N Մ-278-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամ) որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Վ. ՄԻՐՈՒՄՅԱՆ

N 044/7875-13
02.04.13թ

Կատարող՝ Ա. Ամիրյան
Միջազգային հարաբերությունների բաժին
Հեռ. 060 54 43 49

**Ն Ա Խ Ա Գ Ի Ծ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**——————— 2013 թվականի N Մ- - Ա** Ար. 4/2.5

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 15-Ի N Մ-070-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («Առաքելություն Արևելք» մարդասիրական օգնության կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ)**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի մարտի 28-ի N 3.1/3.8-2/4155-13, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2013 թվականի ապրիլի 2-ի N ԴԴ/22/3627-13 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի մարտի 26-ի N ՎՄ/3-6/3114-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Առաքելություն Արևելք» մարդասիրական օգնության կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից ձեռք բերված բեռը (պահպանակներ, 292 տեղ, 7224.08 կգ ընդհանուր քաշով, 53.100 ԱՄՆ-ի դոլար արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 9980 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» Տ/Մ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի փետրվարի 15-ի «Աջակցություն Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման ազգային ծրագրին, փուլ 2» ծրագրի մասին» N Մ-070-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի  Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ Ո Ր  Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ**

Ար. 4/2.5

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

28.03.13թ № 3.1/3.8-2/4155-

Ձեր № ____________

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ՝ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 25.03.2013թ. N 15/15.4/3973-13 գրության՝ կապված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի փետրվարի 15-ի N Մ-070-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Առաքելություն Արևելք» մարդասիրական օգնության կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ) որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

Ատոմ Ջանջուղազյան/

N 034/7702-13
28.03.13թ

Կատարող՝ Մ. Հարությունյան, հեռ. 595-227

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

Ա. 4/2.5

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3
հեռ. (+ 374 10) 58 24 13
ֆաքս (+ 374 10) 52 68 44
էլ. փոստ minister@moh.am

02.04.13 N ԴԴ/22/3627-13
Ձեր N ____________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 25.03.2013թ. թիվ 15/15.4/3973-13 գրության կապակցությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի փետրվարի 15-ի N Մ-070-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Առաքելություն Արևելք» մարդասիրական օգնության կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ) որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ, որ ՀՀ առողջապահության նախարարությունն իր իրավասության շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ԴԵՐԵՆԻԿ ԴՈՒՄԱՆՅԱՆ

N 020/8037-13
02.04.13թ.

Կատարող՝ [illegible]
ՀՀ ԱՆ աշխատակազմի դեղորայքային քաղաքականության բաժին
հեռախոս 52 27 21

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

Ա. 4/2.5

ք. Երևան-0015, Մ. Խորենացի 3, 7

N ԿԱ/3-6/3114-13
26.03.13թ.

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր ս/թ. մարտի 25-ի թիվ 15/15.4/3973-13 գրությամբ կարծիքի ներկայացված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 7-ի N Մ-318-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Առաքելություն Արևելք» մարդասիրական օգնության կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ) որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Վ. ՄԻՐՈՒՄՅԱՆ

N ԿԿ/7394-13
26.03.13թ.

Կատարող՝ Ա. Ամիրյան
Միջազգային հարաբերությունների բաժին
Հեռ. 060 54 43 49

<u>ՆԱԽԱԳԻԾ</u>

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**2013 թվականի N Մ - -Ա** Ար. 4/2.6

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-Ի N Մ-173-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ՍՕՍ-ՄԱՆԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԵՐ» ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի -ի N 3.8-1/ -13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի -ի N ՎԱՅ-4/ -13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 15-ի «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Գյումրի, Իջևան քաղաքներում և Երևանի Քանաքեռ-Զեյթուն ու Արաբկիր վարչական շրջաններում ընտանիքների ամրապնդում և մանկալքության կանխարգելում» ծրագրի մասին» N Մ-173-Ա որոշմամբ ծրագրի 6-րդ, 9-րդ և 11-րդ կետերը կարդալ հետևյալ խմբագրությամբ (կցվում է):

2. Սահմանել, որ Շվեյցարական «ՍՕՍ-մանկական գյուղեր» բարեգործական կազմակերպության միջնորդությամբ Շվեյցարիայի քաղաքացի անհատ բարերար Ադրիան Շուլթեսի կողմից «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված 2008 թվականի արտադրության Renault Megane II 1.6 16v մակնիշի ավտոմեքենան (նույնականացման համարը՝ VF1 KM1 ROA 3976 6270, 3800 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 2000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ, ԱՄ ՍԶՄ US) ներմուծվում է սույն որոշման 1-ին կետում նշված որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Ա. Նայան

«ՍՕՍ Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի

հոգաբարձուների խորհրդի կողմից

« 20 » մարտի 2013թ.

«Գյումրի,Իջևան քաղաքներում և Երևանի Քանաքեռ-Զեյթուն ու Արաբկիր վարչական շրջաններում ընտանիքների ամրապնդման և մանկալքության կանխարգելման»

## Ծ Ր Ա Գ Ի Ր

| | | |
|---|---|---|
| 6. | Ծրագրի բյուջեն | 2013 թվականի կտրվածքով ծրագրի բյուջեն կազմում է 134 210 831 ՀՀ դրամ և ըստ եռամսյակների ծախսերը կկազմեն՝<br>I եռամսյակում 31 993 958 ՀՀ դրամ<br>II եռամսյակում 36 555 624 ՀՀ դրամ<br>III եռամսյակում 32 105 624 ՀՀ դրամ<br>IV եռամսյակում 33 555 625 ՀՀ դրամ<br>2014 - 2015 թվականների կտրվածքով ծրագրի տարեկան բյուջեն կազմում է 131 210 831 ՀՀ դրամ և ըստ եռամսյակների ծախսերը կկազմեն՝<br>I եռամսյակում 31 993 959 ՀՀ դրամ<br>II եռամսյակում 33 555 624 ՀՀ դրամ<br>III եռամսյակում 32 105 624 ՀՀ դրամ<br>IV եռամսյակում 33 555 624 ՀՀ դրամ<br>2013-2015 թվականների ընդհանուր բյուջեն կազմում է մոտավորապես 396 632 493 ՀՀ դրամ:<br>Ծրագրի ֆինանսական աղբյուր է հանդիսանում «ՍՕՍ-Կինդերդորֆ Ինտերնացիոնալ» կազմակերպությունը (Հերման-Գմայներ փողոց 51 A-6020 Իննսբրուկ, Ավստրիա) |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 1. կրթա-դաստիարակչական միջոցառումների կազմակերպում և իրականացում՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 8 713 000 ՀՀ դրամ:Ծախսերը կատարվում են ամսեկան կտրվածքով ;<br>2. առաջնային առողջության պահպանում, բուժսպասարկման ապահովում, անհատական և խմբային հոգեբանական վերականգնողական աշխատանք ծրագրի շահառու երեխաների և ծնողների հետ, ինչպես նաև ծնողավարության հմտությունների դասընթացների կազմակերպում իրավաբանական խորհրդատվություն և աջակցություն |

Ար. 4/2.6

| | | |
|---|---|---|
| | | (ընտանիքներին սոցիալական իրավունքների վերաբերյալ պարզաբանումներ և ուղղորդում, ինչպես նաև երեխաների իրավունքների վերաբերյալ նրանց տեղեկացվածության բարձրացում)՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 17 694 695 ՀՀ դրամ: Ծախսերը կատարվում են ամսեկան կտրվածքով;<br>3. ընտանիքների նյութական աջակցություն և սոցիալական փաթեթի տրամադրում՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 18 933 100 ՀՀ դրամ: Ծախսերը կատարվում են եռամսյակային կտրվածքով;<br>4. տրամադրվող տարածքի վերանորոգում, կոմունալ ծառայություններ և գործունեության իրականացման համար վարձակալված տարածքի վարձավճար՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 6 690 780 ՀՀ դրամ: Տրամադրվող տարածքի վերանորոգման ծախսերը և գործունեության իրականացման համար վարձակալված տարածքի վարձավճարի ծախսերը կատարվում են տարեկան կտրվածքով,իսկ կոմունալ ծառայությունների ծախսերը ամսեկան կտրվածքով;<br>5. շահառուների համար համայնքային կառույցների ներկայացուցիչների մասնակցությամբ համատեղ միջոցառումներ՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 3 220 000 ՀՀ դրամ: Ծախսերը կատարվում են եռամսյակային կտրվածքով;<br>6. ծրագրի մասնագիտական անձնակազմի (շահառուների հետ անմիջականորեն աշխատող անձնակազմի) աշխատավարձեր՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 60 358 256 ՀՀ դրամ: Ծախսերը կատարվում են ամսեկան կտրվածքով;<br>7. Կազմակերպական ծախսերը 2013 թվականի համար կազմում են մոտ 18 601 000 ՀՀ դրամ, իսկ հաջորդ երկու տարիներից յուրաքանչյուրի համար կկազմի մոտ 15 601 000 ՀՀ դրամ: Ծախսերը կատարվում են ամսեկան կտրվածքով: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Այս ծրագրերի շրջանակներում նաև աջակցություն է ցուցաբերվում երեխաների հոգեբանական կայունության, սոցիալիզացիայի, կրթական և ուսումնական հարցերում: Ելնելով յուրաքանչյուր կոնկրետ ընտանիքի կարիքներից՝ անհրաժեշտության դեպքում, կազմակերպությունը պայմանագրային հիմունքներով ժամանակավորապես աջակցում է «սոցիալական փաթեթով», որը ենթադրում է որոշակի քանակի սննդամթերքի, հագուստի, կոշիկների, գրենական պիտույքների կամ հիգիենայի պարագաների և դեղորայքի տրամադրում՝ ելնելով կոնկրետ ընտանիքի կարիքներից:<br>1. կրթա-դաստիարակչական միջոցառումների կազմակերպում և իրականացում՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 8 713 000 ՀՀ դրամ նույն թվում՝<br>1.1. Դպրոցական պարագաների տրամադրում, ուսման վարձերի վճարում, երեխաների հետ արտաժամյա պարապմունքների և նախասիրությունների խմբակների կազմակերպում՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 7 713 000 ՀՀ դրամ;<br>1.2. Նյութեր խմբակների և միջոցառումների կազմակերպման համար (ներկեր, մատիտներ, գրիչներ, ծեփոն, գունավոր թղթեր, սոսինձ, թել, կտոր, մկրատ, վրձիններ և այլն)՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 1 000 000 ՀՀ դրամ; |



| | | |
|---|---|---|
| | | 2. առաջնային առողջության պահպանում, բուժսպասարկման ապահովում, անհատական և խմբային հոգեբանական վերականգնողական աշխատանք ծրագրի շահառու երեխաների և ծնողների հետ, ինչպես նաև ծնողավարության հմտությունների դասընթացների կազմակերպում իրավաբանական խորհրդատվություն և աջակցություն՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 17 694 695 ՀՀ դրամ նույն թվում՝<br>2.1. առաջնային առողջության պահպանում, բուժսպասարկման ապահովում՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 6 480 000 ՀՀ դրամ<br>2.2. անհատական և խմբային հոգեբանական վերականգնողական աշխատանք ծրագրի շահառու երեխաների և ծնողների հետ, ինչպես նաև ծնողավարության հմտությունների դասընթացների կազմակերպում ՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 8 314 695 ՀՀ դրամ<br>2.3. իրավաբանական խորհրդատվություն և աջակցություն (ընտանիքներին սոցիալական իրավունքների վերաբերյալ պարզաբանումներ և ուղղորդում, ինչպես նաև երեխաների իրավունքների վերաբերյալ նրանց տեղեկացվածության բարձրացում)՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 2 900 000 ՀՀ դրամ<br>3. ընտանիքների նյութական աջակցություն և սոցիալական փաթեթի տրամադրում՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 18 933 100 ՀՀ դրամ;<br>3.1. ընտանիքների նյութական աջակցություն և սոցիալական փաթեթի տրամադրում՝ ամսեկան որոշակի քանակի սննդի և տարեկան մեկ անգամ հագուստի տրամադրում ծրագրի շահառուներին յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 18 933 100 ՀՀ դրամ;<br>4. տրամադրվող տարածքի և սարքավորումների վերանորոգում, կոմունալ ծառայություններ և գործունեության իրականացման համար վարձակալված տարածքի վարձավճար՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 6 690 780 ՀՀ դրամ, այդ թվում՝<br>4.1. տրամադրվող տարածքի վերանորոգում՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 600 000 ՀՀ դրամ;<br>4.2. համակարգիչների, համակարգչային ծրագրերի ձեռք բերում և վերանորոգում 300 000 ՀՀ դրամ;<br>4.3. կոմունալ ծառայություններ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 1 156 000 ՀՀ դրամ;<br>4.4. գործունեության իրականացման համար վարձակալված տարածքի վարձավճար՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 4 634 780 ՀՀ դրամ;<br>5. շահառուների համար համայնքային կառույցների ներկայացուցիչների մասնակցությամբ համատեղ միջոցառումներ՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 3 220 000 ՀՀ դրամ;<br>6. ծրագրի մասնագիտական անձնակազմի (շահառուների հետ անմիջականորեն աշխատող անձնակազմի) աշխատավարձեր՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է |

| | | |
|---|---|---|
| | | մոտ 60 358 256 ՀՀ դրամ:<br>7. Կազմակերպական ծախսերը 2013 թվականի համար կազմում են մոտ 18 601 000 ՀՀ դրամ, իսկ հաջորդ երկու տարիներից յուրաքանչյուրի համար կկազմի մոտ 15 601 000 ՀՀ դրամ: Ծախսերը կատարվում են ամսական կտրվածքով: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսերը 2013 թվականի համար կազմում են մոտ 18 601 000 ՀՀ դրամ, իսկ հաջորդ երկու տարիներից յուրաքանչյուրի համար կկազմի մոտ 15 601 000 ՀՀ դրամ, որոնք համապատասխանաբար կազմում են 2013 թվականի տարեկան բյուջեի 13.86 տոկոսը և 2014-2015թ.թ. 11.89 տոկոսը:<br>Այդ թվում՝<br>1. աշխատակազմի ծախսեր՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 3 050 000 ՀՀ դրամ, այդ թվում՝<br>1.1. աշխատակազմի վերապատրաստման ծախսեր՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 2 600 000 ՀՀ դրամ<br>1.2. աշխատակազմի վերապատրաստման հետ կապված գործուղման ծախսեր՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 450 000 ՀՀ դրամ<br>2. վարչական ծախսեր ՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 6 016 000 ՀՀ դրամ;<br>3. աշխատակիցների տրանսպորտային և գործուղման ծախսեր՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 5 455 000 ՀՀ դրամ;<br>4. գրասենյակների և աշխատակիցների աշխատատեղերի կահավորում, պահպանում և համալրում համապատասխան կահույքով, սարքավորումներով և սպասարկմամբ՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 980 000 ՀՀ դրամ;<br>5. չնախատեսված վարչական և ընթացիկ ծախսեր ՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 100 000 դրամ;<br>6. 2013 թ. մարդատար ավտոմեքենայի ձեռք բերում կամ ներմուծում՝ 3 000 000 ՀՀ դրամ; |

Ազգային տնօրեն Քոչարյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

մր 4/2.6

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

3.04.13 № 3/13.8-2/4383-13

Ձեր №

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ՝ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 28.03.2013թ. N 15/15.1/4244-13 գրության՝ կապված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 15-ի N Մ-173-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու և նույն ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամ» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ ընդհանուր առմամբ առարկություններ չունենք, սակայն առաջարկում ենք ծրագրի 10-րդ կետում ներառել նաև ներմուծվող մեքենայի գործարքը:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

034/8179-13

Կատարող՝ Մ. Հարությունյան, հեռ. 595-227

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

ոռ 4/2.6

« 02 » 04 2013 թ. N 2413-13

Ձեր 2013-03-28, 15/15.1/4244-13

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Քննարկելով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հանձնաժողովի 2013 թվականի մարտի 15-ի N Մ-173-Ա որոշմամբ հաստատված ծրագրում փոփոխություններ կատարելու ու նույն ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագիծը՝ հայտնում եմ, որ նախարարությունը վերոհիշյալ ծրագրի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Ֆ. ԲԵՐԻԿՅԱՆ

040/8042-13

Միջազգային կապերի բաժին
հեռ.563-791

0010, ք. Երևան, Կառավարական տուն 3 հեռ (374 10) 56 53 83, ֆաքս. (374 10) 52 08 30
http://www.mss.am info@mss.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ ոռ 4/2.6

ք. Երևան-0015, Մ. Խորենացի 3, 7

ԶԱ/3-6/3354-13
2.04.13

**ՀՀ կառավարության բարեգործական**
**ծրագրերի համակարգման**
**հանձնաժողովի նախագահ**
**պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր ս/թ. մարտի 28-ի համար 15/15.1/4244-13 գրությամբ կարծիքի ներկայացված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 15-ի N Մ-173-Ա որոշմամբ հաստատված ծրագրում փոփոխություններ կատարելու ու նույն ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Վ. ՄԻՐՈՒՄՅԱՆ

044/7873-13

*Կատարող՝ Ա. Ամիրյան*
*Միջազգային համագործակցության բաժին*
*Հեռ. 060 54 43 49*

**ՆԱԽԱԳԻԾ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**2013 թվականի N Մ - - Ա** Մ·4/3.1
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-Ի N Մ-173-Ա, N Մ-175-Ա ԵՎ N Մ-177-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՍՕՍ-ՄԱՆԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԵՐ» ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի -ի N 3/3.8-1/ -13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի -ի N ՎՄ/3-4/ -13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 15-ի «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Գյումրի, Իջևան քաղաքներում, Երևանի Քանաքեռ-Զեյթուն ու Արաբկիր վարչական շրջաններում ընտանիքների ամրապնդման և մանկալքության կանխարգելում» ծրագրի մասին» N Մ-173-Ա, «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Առանց ծնողական խնամքի մնացած պատանիների ու երիտասարդների երկարաժամկետ խնամք և դաստիարակություն» N Մ-175-Ա և «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Կոտայքի մարզի Կոտայք գյուղում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների երկարաժամկետ ընտանեկան տիպի խնամք և դաստիարակություն» ծրագրի մասին» N Մ-177-Ա որոշումներով հաստատված ծրագրերի իրականացման հետ և դրանց համար ունի զգալի նշանակություն՝

«Յուքոմ» ՍՊԸ -ի հետ (ՀՎՀՀ՝ 00024873) 2012 թվականի փետրվարի 1-ին կնքված N 021/01/02/2012 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2013 թվականի մարտի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցում՝ 1605850 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի (այդ թվում՝ 313340 դրամի չափով N Մ-173-Ա որոշմամբ հաստատված ծրագրի համար, 1092510 դրամի չափով N Մ-175-Ա որոշմամբ հաստատված ծրագրի համար և 200000 դրամի չափով N Մ-177-Ա որոշմամբ հաստատված ծրագրի համար) :

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

Մ·4/2.6

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 15-ի N Մ-173-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու և նույն որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
|---|---|
| ՀՀ ֆինանսների նախարարություն – 3.04.13, N 3/3.8-2/4383-13 | |
| 1. Ընդհանուր առմամբ առարկություններ չունենք, սակայն առաջարկում ենք ծրագրի 10-րդ կետում ներառել նաև ներմուծվող մեքենայի գործարքը | 1. Կատարված է համապատասխան լրացում: Կցված է լրամշակված տարբերակը |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ**

ԱՐ 4/3.1

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

29.03.13 № 31/38-1/4280-13

Ձեր № ____________

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր- Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 26.03.13թ. N 15/15.1/4092-13 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013թ. մարտի 15-ի N Մ-173-Ա, Մ-175-Ա և Մ-177-Ա («ՍՕՍ մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամ) որոշումներով հաստատված ծրագրերին հարակից գործարք («Յուքոմ» ՍՊԸ-ի հետ կնքված գործարք) հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան/

034/7863-13

Կատարող՝ Ն. Հարությունյան, հեռ. 595-229

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ**

**ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**

**ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ**

ԱՐ 4/3.1

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
Հեռ. 50 20 20, 060 54 43 03

ՎՄ/3-1/3293-13
29.03.13

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 26.03.2013թ. թիվ 15/15.1/4092-13 գրությանը կից ներկայացված «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 15-ի N Մ-173-Ա, N Մ-175-Ա և N Մ-177-Ա որոշումներով հաստատված ծրագրերին հարակից գործարքի մասին («ՍՕՍ-ՄԱՆԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԵՐ» հայկական բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ.

Կից ներկայցված «Յուքոմ» ՍՊԸ -ի հետ *2012 թվականի փետրվարի 1-ին* կնքված պայմանագրի 7.1 կետի համաձայն՝ «Սույն պայմանագիրը գործում է ուժի մեջ մտնելուց մեկ տարի ժամկետով: Պայմանագրի ժամկետը լրանալուց ոչ ուշ, քան 15 (տասնհինգ) օր առաջ մյուս կողմին պայմանագիրը լուծելու մասին գրավոր կերպով չտեղեկացնելու դեպքում պայմանագրի ժամկետը երկարաձգվում է ևս 1 (մեկ) տարով: Երկարաձգումների քանակը սահմանափակված չէ:» Տվյալ դեպքում անհրաժեշտ է հիմնավորել պայմանգրի ուժի մեջ գտնվելու հանգամանքը:

Վերը նշված պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին 2012թ. մարտի 20 համաձայնագրի 1. կետի համաձայն՝ ծառայությունների ամսական վճարը կազմում է 228900 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ), ինչը առանց ԱԱՀ կկազմի 190742.37, որը 2013թ. մարտից մինչև 2013թ. դեկտեմբեր (ներառյալ) ամիսների համար կկազմի 1907423.7 ՀՀ դրամ, սակայն որոշման նախագծում տվյալ ժամանակահատվածի համար էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցումը սահմանված է 1605850 դրամի չափով: Տվյալ դեպքում անհրաժեշտ եմ համարում ուղղել արժեքային անհամապատասխանությունը:

Հարգանքով՝

Վ. Միրումյան

Անուղղակի հարկերի բաժին, հեռ. 060 544652

014/7749-13

ՍՕՍ ՄԱՆԿԱԿԱՆ
ԳՅՈՒՂԵՐ
ՀԱՅԱՍՏԱՆ

Ա·4/3.1

02 ապրիլի, 2013թ

50-13 ԱՔ/ՆՎ

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի**
**համակարգման հանձնաժողովի նախագահ**
**պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

Հարգելի պարոն Ս. Տեր-Սիմոնյան,

Ձեզ ենք ներկայացնում «ՍՕՍ Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Կոտայքի մարզ, Կոտայք գյուղում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների երկարաժամկետ ընտանեկան տիպի խնամք և դաստիարակություն», «Առանց ծնողական խնամքի մնացած պատանիների ու երիտասարդների երկարաժամկետ խնամք և դաստիարակություն», «Գյումրի, Իջևան քաղաքներում և Երևանի Քանաքեռ-Զեյթուն ու Արաբկիր վարչական շրջաններում ընտանիքների ամրապնդման և մանկալքության կանխարգելման» ծրագրերի հետ անմիջականորեն կապ ունեցող հարակից գործարքների վերաբերյալ «Յուքոմ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ 00024873) 2012 թվականի փետրվարի 1-ին կնքված N 021/01/02/2012 պայմանագրի հետ կապված ՀՀ Կառավարությանն Առընթեր Պետական Եկամուտների Կոմիտեի կողմից կատարված ՎՄ/3-1/3293-13 դիտողության պարզաբանումը.

1. Ի պատասխան վերը նշված պայմանագրի 7.1 կետի վերաբերյալ դիտողության` Ձեզ ենք ներկայացնում «Յուքոմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեղեկանքը, որը հիմնավորում է տվյալ պայմանագրի` ուժի մեջ գտնվելու հանգամանքը:

2. Արժեքային անհամապատասխանությունների վերաբերյալ խնդրում ենք ի նկատի ունենալ վերը նշված պայմանագրի անբաժանելի մաս կազմող ոչ թե 2012 թվականի մարտի 20-ի, այլ 2012 թվականի մայիսի 24-ին կողմերի միջև կնքված համաձայնագիրը, որի հիման վրա էլ կատարվել են հաշվարկները:

Առդիր` 22 թերթ:

676

Խորին շնորհակալության [illegible] ցանկություններով`

Աշոտ Քոչարյան [illegible]գային տնօրեն

099-8/18
03 04 2013

«ՍՕՍ Մանկական գյուղեր»
հայկական բարեգործական հիմնադրամ
ՀՀ, ք. Երևան 0002,
Եկմալյան 1, բն. 31

Հեռ.` +374 10 533352/533372
Ֆաքս` +374 10 533342
Էլ. փոստ` soscvarmenia@sos-kd.am
www.sos-kd.am



Universal Communications

«ՅՈՒՔՈՄ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, 0025
Սայաթ-Նովա 40/1
Հեռ.` (+374 60) 44-44-44
Ֆաքս` (+374 60) 44-44-41
Էլ. փոստ` info@ucom.am
Վեբ կայք` www.ucom.am

"UCOM" LLC
40/1 Sayat-Nova Ave.
Yerevan 0025, Armenia
Phone: (+374 60) 44-44-44
Fax: (+374 60) 44-44-41
E-mail: info@ucom.am
Web: www.ucom.am

Ա·4/3.1

# ՏԵՂԵԿԱՆՔ

Սույնով հայտնում ենք, որ «Յուքոմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի միջև 01.02.2012թ. կնքված Էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցման մասին թիվ 021/01/02/2012 պայմանագիրը երկարաձգվել է ևս մեկ տարի ժամկետով և գործում է մինչև 01.02.2014թ.:

«Յուքոմ» ՍՊԸ տնօրեն`

Հայկ Եսայան

ԱՐ 4/3.1

0180694

## Համաձայնագիր

«Էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցման մասին» թիվ 021/01/02/2012 Պայմանագրի Հավելված 1-ում փոփոխություն կատարելու վերաբերյալ

ք. Երևան «24» մայիսի 2012թ.

1.Տրամադրվող ծառայություն/ներ՝

| N | Արագություն / քանակ | Ամսավճար ՀՀ դրամ | Հասցեներ |
|---|---|---|---|
| 1 | Unet SoHo Highway Ինտերնետ 8 Մբթ/վ | 45834 | ք. Երևան, Եկմալյան 1, բն. 30-31 |
| 2 | U!Phone Corporate + 060503513 | 3167 | ք. Երևան, Եկմալյան 1, բն. 30-31 |
| 3 | Unet Soho Starter Ինտերնետ 3 Մբթ/վ | 12500 | ք. Երևան, Հ. Քոչարի 8, բն. 18-19 |
| 4 | Unet Soho Starter Ինտերնետ 3 Մբթ/վ | 12500 | ք. Երևան, Կիևյան 26/1 |
| 5 | UTV Full | 7083 | ք. Երևան, Կիևյան 26/1 |
| 6 | U!Phone Corporate + 060443284 | 3167 | ք. Երևան, Կիևյան 26/1 |
| 7 | Unet Soho Starter Ինտերնետ 3 Մբթ/վ | 12500 | ք. Երևան, Դավիթ Անհաղթ 11, 6-րդ հարկ |
| 8 | U!Phone Corporate + 060504514 | 3167 | ք. Երևան, Դավիթ Անհաղթ 11, 6-րդ հարկ |
| 9 | Unet Soho Starter Ինտերնետ 3 Մբթ/վ | 20000 | ք. Աբովյան, Հերման Գմայների 1 |
| 10 | Unet Soho Starter Ինտերնետ 3 Մբթ/վ | 12500 | ք. Երևան, Երզնկյան 79ա |
| 11 | Unet Soho Starter Ինտերնետ 3 Մբթ/վ | 12500 | ք. Երևան, Նար-Դոսի 34, բն. 1 |
| 12 | U!Phone Corporate + 060447726 | 3167 | ք. Երևան, Ն. Զարյան 27, 104 սենյակ |
| 13 | Unet Soho Starter Ինտերնետ 3 Մբթ/վ | 12500 | ք. Երևան, Ն. Զարյան 27, 104 սենյակ |

2. Ծառայության սակագները

2.1. Ծառայության/ների ամսական վճարն առանց ԱԱՀ կազմում է 160585 (մեկ հարյուր վաթսուն հազար հինգ հարյուր ութսունհինգ) ՀՀ դրամ:

ԱՐ 4/3.1

«Յուքոմ» ՍՊԸ
Իր. Հասցե՝ ք. Երևան, Տերյան 19, բն.4
Գործ. Հասցե՝ ք. Երևան, Մայար-Նովա 40/1
հեռ.՝ 374 60 444444
ֆաքս՝ 374 60 444441
ՀՎՀՀ 00024873
«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ
Հ/Հ 001-264993-001

Գլխավոր տնօրեն՝

Ա. Բարսեղյան

«ՍՕՍ-Մանկական Գյուղեր» ՀԲՀ
Իր. հասցե՝ք. Երևան, Հ. Քոչարի 8, բն. 18-19
Գործ. հասցե՝ք. Երևան, Եկմալյան 1, բն. 30-31
Հեռ.՝060503513, 098557792
ՀՎՀՀ 03517269

Ազգային տնօրեն՝

Ա. Քոչարյան

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 15-ի N Մ-173-Ա, N Մ-175-Ա և N Մ-177-Ա որոշումներով հաստատված ծրագրերին հարակից գործարքի մասին («ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
|---|---|
| ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե – 29.03.13, N ՎՄ/3-1/3293-13 | |
| 1. Կից ներկայցված «Յուքոմ» ՍՊԸ -ի հետ *2012 թվականի փետրվարի 1-ին* կնքված պայմանագրի 7.1 կետի համաձայն՝ «Սույն պայմանագիրը գործում է ուժի մեջ մտնելուց մեկ տարի ժամկետով: Պայմանագրի ժամկետը լրանալուց ոչ ուշ, քան 15 (տասնհինգ) օր առաջ մյուս կողմին պայմանագիրը լուծելու մասին գրավոր կերպով չտեղեկացնելու դեպքում պայմանագրի ժամկետը երկարաձգվում է ևս 1 (մեկ) տարով: Երկարաձգումների քանակը սահմանափակված չէ:» Տվյալ դեպքում անհրաժեշտ է հիմնավորել պայմանգրի ուժի մեջ գտնվելու հանգամանքը:<br>Վերը նշված պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին 2012թ. մարտի 20 համաձայնագրի 1. կետի համաձայն՝ ծառայությունների ամսական վճարը կազմում է 228900 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ), ինչը առանց ԱԱՀ կկազմի 190742.37, որը 2013թ. մարտից մինչև 2013թ. դեկտեմբեր (ներառյալ) ամիսների համար կկազմի 1907423.7 ՀՀ դրամ, սակայն որոշման նախագծում տվյալ ժամանակահատվածի համար էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցումը սահմանված է 1605850 դրամի չափով: Տվյալ դեպքում անհրաժեշտ ենք համարում ուղղել արժեքային անհամապատասխանությունը: | 1. Հաշվարկը ճիշտ է: Կցված է կազմակերպության պարզաբանումը |

Մ 4/3.1

**ՆԱԽԱԳԻԾ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**մարտի 2013 թվականի N Մ- -Ա**

**քաղ. Երևան**

Մ 4/3.2

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 28-Ի N Մ-120-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ («ՍԵՅՎ ԴԸ ՉԻԼԴՐԵՆ ԻՆՏԵՐՆԵՇՆԼ» ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի մարտի -ի N 3/3.8-1/ -13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի մարտի -ի N ՎՄ/3-4/ -13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ է.***

1. Սահմանել, որ «Սեյվ դը չիլդրեն Ինտերնեշնլ» հայաստանյան ներկայացուցչության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 28-ի «Սեյվ դը չիլդրեն ֆեդերեյշն, ինկ.» ամերիկյան բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Նախաձեռնություն հանուն երեխայի առողջության և կրթության» N Մ-120-Ա որոշմամբ (2012 թվականի մարտի 14-ի N Մ-161-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Միկշին» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01561878) 2012 թվականի հոկտեմբերի 31-ին կնքված N ՄՍ-31/10-1 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տարածքի վարձակալություն 2013 թվականի մարտի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը՝ 1253700 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Միկշին» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01561878) 2012 թվականի նոյեմբերի 21-ին կնքված N ՄՍ-21/11 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է արխիվային տարածքի վարձակալություն 2013 թվականի մարտի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը՝ 25000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Միկշին» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01561878) 2013 թվականի հունվարի 9-ին կնքված N ՄՍ 09/01-13 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տարածքի սպասարկման ծառայությունների մատուցում՝ 2013 թվականի մարտի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը՝ 41790 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի :

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

մ. 4/3.2

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

18.03.2013թ №3/3.8-1/3423-13

Ձեր № ______________

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր- Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 11.03.13թ. N 15/15.1/3231-13 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011թ. փետրվարի 28-ի N Մ-120-Ա (<<Սեյվ դը չիլդրեն ֆեդերեյշն, ինկ.>> ամերիկյան բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ) որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին որոշման նախագծի (<<Միկշին>> ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագրեր) հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ա. Ջանջուղազյան

Ատոմ Ջանջուղազյան

034/6579-13
18.03.2013թ

Կատարող՝ Ն. Հարությունյան, հեռ. 595-229

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

մ. 4/3.2

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
Հեռ. 50 20 20, 060 54 43 03

№ ԿՎ/3-8/2660-13
15.03.2013թ

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 11.03.2013թ. թիվ 15/15.1/3231-13 գրությանը կից ներկայացված «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 28-ի N Մ-120-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Սեյվ դը չիլդրեն ինտերնեշնլ» հայաստանյան ներկայացուցչություն)» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ.

Վերը նշված ծրագրի 8-րդ կետի համաձայն՝ ծրագրի իրականացման տևողությունը 01.01.2011թ.-ից 31.12.2013թ. է և 11-րդ կետի համաձայն՝ օպերացիոն ծախսերի ծավալը կազմում է 5173090 դրամ, որը ներառում է ***գրասենյակի վարձը, կոմունիկացիոն ծախսեր, գրենական պիտույքներ, սարքավորումների սպասարկման ծախսեր, բանկային ծախսեր***, սակայն կից ներկայացված «Միկշին» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագրերով նախատեսված ծառայությունների ժամանակահատվածները (նախատեսված են մինչև 5-րդ և 9-րդ ամիսները 2017թ.) և դրանց դիմաց վճարվելիք գումարները էականորեն տարբերվում են ծրագրային դրույթներից, քանի որ գործարքների արժեքը հաշվարկված ըստ ժամանակահատվածի ամիսների էականորեն գերազանցում են օպերացիոն ծախսերի ծավալը:

Ելնելով վերոգրյալից՝ հայտնում եմ, որ նշված գործարքների որակումը որպես ծրագրին հարակից, համարում եմ ոչ նպատակահարմար:

Հարգանքով՝

Վ. Միրումյան

Առողջակի հարկերի բաժին, հեռ. 060 544652

044/6548-13
15.03.2013թ

Save the Children

#065/13

27-ը մարտի 2013 թ.

մ. 4/3.2

ՀՀ կառավարությանն առընթեր
պետական եկամուտների կոմիտեի
նախագահի տեղակալ պ-ն Վ. Միրումյան

Պատճենը՝ ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ՝ պ-ն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պ-ն Միրումյան,

Ձեր կողմից ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին ուղղված ս.թ. մարտի 15-ի թիվ ՎՄ/3-8/2660-13 նամակի կապակցությամբ կուզենայի տրամադրել որոշ պարզաբանումներ, որոնք հուսով եմ կօժանդակեն մեր կողմից վերոհիշյալ հանձնաժողովին ներկայացված հայտի որակմանը՝ որպես «Նախաձեռնություն հանուն երեխայի առողջության և կրթության» ծրագրին հարակից գործարք:

Մասնավորապես, հղում կատարելով գրասենյակի վարձակալության վերաբերյալ Ձեր նկատառումին՝ նշեմ, որ գրասենյակային տարածքը «Սեյվ դը չիլդրենի» կողմից վարձակալվել է 2012 թ. դեկտեմբերին՝ մինչև 2017թ. պայմանագրային ժամկետով: Պայմանագիրը կնքվել է գրասենյակի ամբողջ տարածքի համար, և այն ծառայում է «Սեյվ դը չիլդրենի» ողջ անձնակազմին մի շարք բարեգործական ծրագրերի իրականացման նպատակով՝ ուղղված երեխաների շահերի, իրավունքների պաշտպանության ու բարեկեցության խթանմանը:

ՀՀ ... ԱՇԽ...
ԲՆԴՈՒՆՎԱԾ 094-8244
Մուտք. թիվ
04 — 04 — 2013 թ.


**Armenian Representative Office**
**27, Azatutyan Ave., 3rd floor,**
**Yerevan 0014, Armenia**
**Tel: (374-10) 20-10-14, 20-10-25, 20-10-29, Fax: (374-10) 20-12-29**
**E-mail: Armenia@savethechildren.org**



... to inspire breakthroughs in the way the world treats children, ... change in their lives


մ. 4/3.2

Վարձակալության գումարը, 4 500 ՀՀ դրամ (առանց ԱԱՀ) մեկ քառակուսի մետրի համար, բաշխվում է բոլոր իրականացվող ծրագրերի վրա՝ ըստ ծրագրային անձնակազմի կողմից զբաղեցված տարածքի:

Այսպես՝ 278.6 քառակուսի մետր ընդհանուր տարածքից 28.1 քառակուսի մետր զբաղեցվում է «Նախաձեռնություն հանուն երեխայի առողջության և կրթության» ծրագրի աշխատակազմի կողմից, որը կազմում է ընդհանուր տարածքի 10 %-ը: Հետևաբար, ծրագրի շրջանակներում վարձակալության ընդհամնուր արժեքի միայն 10 %-ն է ներկայացվում որպես ծախս: Քանի որ ծրագրի տևողության ժամկետը սահմանված է մինչև 2013թ. դեկտեմբեր ամիսը, 2013թ. մարտ-դեկտեմբեր ամիսների համար ընդհանուր արժեքի 10 %-ը կկազմի է 1,253,700 ՀՀ դրամ, որը ներկայացվել էր բարեգործական ծրագրերի հանձնաժողով որպես ծրագրին հարակից գործարք:

Միևնույն սկզբունքով նաև հաշվարկել են արխիվային տարածքի վարձակալության ծախսը, ինչպես նաև սպասարկման ծախսերը «Նախաձեռնություն հանուն երեխայի առողջության և կրթության» ծրագրի շրջանակներում:

Խնդրում եմ հաշվի առնել վերոգրյալ պարզաբանումները մեր կողմից ներկայացված գործարքի՝ որպես ծրագրին հարակից որակելու նպատակով:

Կանխավ շնորհակալություն:

Տնօրեն՝ [signature] Իրինա Սաղոյան

*Կատարող՝ Մ. Շահբազյան 20 10 14 (106); 20 10 25(106)*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 փետրվարի 2011 թվականի N Մ- 120 -Ա

(Որոշումն ընդունվել է 2011 թվականի փետրվարի 18-ի նիստին)

## «ՍԵՅՎ ԴԸ ՉԻԼԴՐԵՆ ՖԵԴԵՐԵՅՇՆ, ԻՆԿ.» ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՈՒՆ ԵՐԵԽԱՅԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի փետրվարի 3-ի N 3/3.8-1/857-11, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2011 փետրվարի 7-ի N 565-11, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության 2011 փետրվարի 25-ի N 07/07.1/1047-11, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2011 թվականի փետրվարի 3-ի N ՀԲ/22/553-11, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2011 թվականի փետրվարի 3-ի N 03/07.2/796-11, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի փետրվարի 8-ի N ԱԱ/3-4/594-11, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2011 թվականի փետրվարի 3-ի N 01/10.1/248-11, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2011 թվականի փետրվարի 2-ի N 02/08.1/274-11 և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2011 թվականի փետրվարի 7-ի N 01/15/349-11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ  է.***

1. Բարեգործական որակել «Սեյվ դը չիլդրեն ֆեդերեյշն, ինկ.» կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Աջափնյակ Ացաթանգեղոսի 2ա, ՀՎՀՀ՝ 01519077) իրականացվող 164075390 դրամ արժողությամբ «Նախաձեռնություն հանուն երեխայի առողջության և կրթության» ծրագիրը (կցվում է):

2 «Սեյվ դը չիլդրեն ֆեդերեյշն, ինկ.» կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կենտրոնի կողմից, ինչպես նաև կենտրոնին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Արմավիրի և Գեղարքունիքի մարզպետներին:

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Ա.4/3.2

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Սեյվ դը չիլդրեն ֆեդերեյշըն, ինկ.» կազմակերպության

Հայաստանի մասնաճյուղի տնօրեն՝ Ի. Սաղոյանի կողմից

...............................

09-ը փետրվարի 2011 թ.

## «Նախաձեռնություն Հանուն Երեխայի Առողջության և Կրթության» ծրագիր

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Առավելագույնս նպաստել Հայաստանի երեխաների կրթությանը և ունակությունների զարգացմանը: Ռազմավարական խնդիրները երկուսն են. 1. Նպաստել երեխաների մասնակցությանը վաղ մանկության զարգացման որակյալ ծրագրերում և 2. Բարելավել դպրոցական առողջության և սննդի հիմնական ծառայությունները և նրանց կիրառելիությունը: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային և մաքսային արտոնություններից: |
| 3 | Բարեգործը | «Սեյվ դը չիլդրեն» Շվեյցարիա<br>Save the Children Switzerland, Scheuchzerstrasse 64, 8006 Zurich |
| 4 | Ծրագրի կատարողը | «Սեյվ դը Չիլդրեն ֆեդերեյշըն ինկ.» կազմակերպության Հայաստանյան մասնաճյուղ<br>Հասցեն՝ Երևան, Ազաթանգեղոսի 2ա, ՀՎՀՀ 01519077 |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Վայրը՝ ՀՀ, Արմավիրի, Արագածոտնի և Գեղարքունիքի մարզի ընտրված համայնքներ:<br>Բնագավառը՝ նախադպրոցական կրթություն, դպրոցական առողջության, սննդի և վաղ մանկության զարգացում: |
| 6 | Ծրագրի բյուջեն | 164,075,390 դրամ (կամ 443,447 ԱՄՆ դոլար՝ հաշված 370 փոխարժեքով) |

2/16

1

| | | |
|---|---|---|
| 7 | Բարեգործություն ստացողը | Բարեգործություն ստացողներ են հանդիսանում Արմավիրի, Արագածոտնի և Գեղարքունիքի մարզերի 12 գյուղական համայնքներ, մասնավորապես տեղի 0-6 տարեկան երեխաները, նրանց ծնողները, դպրոցների աշխատակիցները և անձնակազմը: Յուրաքանչյուր մարզում կընտրվեն չորս առավել կարիքավոր համայնքներ, որտեղ չկան գործող մանկապարտեզներ, դպրոցներում խիստ բացակայում են կամ առկա են վատթար սանիտարական պայմաններ, հաշվի կառնվեն նաև նախադպրոցական տարիքի երեխաների թիվը, համայնքների հեռավորությունը և պետական աջակցության ծրագրերի առկայությունը: Գյուղերի ընտրությունը կիրականացվի յուրաքանչյուր տարվա առաջին երկու ամիսների ընթացքում: |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | 2011 թվականի հունվարի 1-ից մինչև 2013 թվականի դեկտեմբերի 31-ը: |
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագիրը կիրականացվի ամեն տարի մեկ մարզում, երեք տարիների ընթացքում ընդգրկելով երեք մարզ: Ծրագրի հիմնական նպատակներին հասնելու համար նախատեսվում է վերանորոգել և կահավորել նախադպրոցական դասընթացների համար նախատեսված դասասենյակ, յուրաքանչյուր դպրոցում վերանորոգել 2 զուգարաններ, ապահովելով մշտական ջուր և սանիտարական պայմաններ, մշակել և տպագրել կրթական նյութեր, ինչպես նաև կազմակերպել տարբեր անվճար դասընթացներ շահառուների համար (5-6 տարեկան երեխաների համար նախադպրոցական դասընթացներ, երեխաների զարգացման վերաբերյալ ծնողական կրթություն, դպրոցական առողջության և սննդի, ինչպես նաև առողջ ապրելակերպի զարգացման վերաբերյալ երեխաների կրթում և դպրոցների աշխատակազմի վերապատրաստում):<br>Ընդամենը պլանավորվում է իրականացնել հետևյալ ծախսերը. |

Ն 4/3 2

2

| Եռամսյակ | Կրթ. Նյութերի մշակում և տպագրություն (հազ. դրամ) | ԱՐՄԱՎԻՐԻ մարզ | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Ծրագրային աշխատակազմի աշխատավարձ (հազ. դրամ) | Վերապատրաստման և կրթական դասընթացների կազմակերպում (հազ. դրամ) | Նախագծային փաստաթղթերի կազմում և վերանորոգման աշխատանքներ (հազ. դրամ) | Կահույքի ձեռքբերում և տրամադրում (հազ. դրամ) | Գործունեության ծախսեր (հազ. դրամ) | Ընդամենը ըստ եռամսյակի (հազ. դրամ) |
| I - 2011 | | 4,968.4 | | 2,018.0 | | 188.5 | 7,174.9 |
| II – 2011 | 568.7 | 4,968.4 | 1,255.1 | 18,161.6 | | 659.8 | 25,613.6 |
| III – 2011 | 568.7 | 4,968.4 | 1,255.1 | | 2,319.2 | 659.8 | 9,771.2 |
| IV – 2011 | | 4,968.4 | 1,255.0 | | | 377.1 | 6,600.5 |
| Ընդամենը | 1,137.4 | 19,873.6 | 3,765.2 | 20,179.6 | 2,319.2 | 1,885.2 | 49,160.2 |

| ԱՐԱԳԱԾՈՏՆԻ մարզ | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Եռամսյակ | Ծրագրային աշխատակազմի աշխատավարձ (հազ. դրամ) | Վերապատրաստման և կրթական դասընթացների կազմակերպում (հազ. դրամ) | Նախագծային փաստաթղթերի կազմում և վերանորոգման աշխատանքներ (հազ. դրամ) | Կահույքի ձեռքբերում և տրամադրում (հազ. դրամ) | Գործունեության ծախսեր (հազ. դրամ) | Ընդամենը ըստ եռամսյակի (հազ. դրամ) |
| I – 2012 | 4,968.4 | | 2,018.0 | | 188.5 | 7,174.9 |
| II – 2012 | 4,968.4 | 1,255.1 | 18,161.6 | | 659.8 | 25,044.9 |
| III – 2012 | 4,968.4 | 1,255.1 | | 2,319.2 | 659.8 | 9,202.5 |
| IV – 2012 | 4,968.4 | 1,255.0 | | | 377.1 | 6,600.5 |
| Ընդամենը | 19,873.6 | 3,765.2 | 20,179.6 | 2,319.2 | 1,885.2 | 48,022.8 |

3

| ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ մարզ | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Եռամսյակ | Ծրագրային աշխատակազմի աշխատավարձ (հազ. դրամ) | Վերապատրաստման և կրթական դասընթացների կազմակերպում (հազ. դրամ) | Նախագծային փաստաթղթերի կազմում և վերանորոգման աշխատանքներ (հազ. դրամ) | Կահույքի ձեռքբերում և տրամադրում (հազ. դրամ) | Գործունեության ծախսեր (հազ. դրամ) | Ընդամենը ըստ եռամսյակի (հազ. դրամ) |
| I – 2013 | 4,968.4 | | 2,018.0 | | 188.5 | 7,174.9 |
| II – 2013 | 4,968.4 | 1,255.1 | 18,161.6 | | 659.8 | 25,044.9 |
| III – 2013 | 4,968.4 | 1,255.1 | | 2,319.2 | 659.8 | 9,202.5 |
| IV – 2013 | 4,968.4 | 1,255.0 | | | 377.1 | 6,600.5 |
| Ընդամենը | 19,873.6 | 3,765.2 | 20,179.6 | 2,319.2 | 1,885.2 | 48,022.8 |

| | | |
|---|---|---|
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | • Շինարարական նյութերի ձեռքբերում և ծառայությունների մատուցում - 60,538,800դր.,<br>• Կահույքի և պարագաների ձեռքբերում - 6,957,600 դր.,<br>• Ծրագրային աշխատակազմի աշխատավարձը (ներառյալ ծրագրի ղեկավար, շինարարության համակարգող, մոնիտորինգի և գնահատման պատասխանատու, հասարակայնության հետ կապերի պատասխանատու, վերապատրաստումների և զարգացման պատասխանատու) - 59,620,800 դր.,<br>• Վերապատրաստման և կրթական դասընթացների կազմակերպում - 11,295,600 դր.,<br>• Կրթական նյութերի մշակման և տպագրության ծառայությունների մատուցում – 1,137,400 դր.,<br>• Գործունեության և տրանսպորտային ծախսեր (գործուղումներ վերապատրաստման նպատակով, փոխադրման ծառայությունների մատուցում ) - 5,655,600 դր. |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | • Սպասարկող աշխատակազմի աշխատավարձը - 11,476,500 դր.<br>• Օպերացիոն ծախսեր - 5,173,090 դր., ներառում է գրասենյակի վարձը, կոմունիկացիոն ծախսեր, գրենական պիտույքներ, սարքավորումների սպասարկման ծախսեր, բանկային ծախսեր,<br>• Աուդիտի ծախսեր – 2,220,000 դր: |

4

Մ. 4/3.2

| | | |
|---|---|---|
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագրի իրականացման ընթացքում «Սեյվ դը չիլդրեն» կազմակերպությունը կհամագործակցի ՀՀ Կրթության և գիտության, Տարածքային կառավարման և Առողջապահության նախարարությունների, ինչպես նաև ընտրված համայնքների գյուղապետարանների և տեղի դպրոցների հետ: |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի կատարման նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է «Սեյվ դը չիլդրեն ֆեդերեյշըն, ինկ.» կազմակերպության, նշված նախարարությունների և տեղական ինքնակառավարման մարմինների համապատասխան ծառայությունների կողմից և ընդգրկում է հետևյալ գործողությունները.<br>• Շինարարական վերահսկողություն;<br>• Ֆինանսական վերահսկողություն/ մոնիթորինգ;<br>• Ադմինիստրատիվ վերահսկողություն;<br>• Սահմանված կարգով հաշվետվություններ են ներկայացվում ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |



ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 28-ի N Մ-120-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Սեյվ դը չիլդրեն Ինթերնեշնլ» հայաստանյան ներկայացուցչություն)» որոշման նախագծի վերաբերյալ

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
|---|---|
| ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե –15.03.13, N ՎՄ/3-8/2660-13 | |
| 1. Վերը նշված ծրագրի 8-րդ կետի համաձայն՝ ծրագրի իրականացման տևողությունը 01.01.2011թ.-ից 31.12.2013թ. է և 11-րդ կետի համաձայն՝ օպերացիոն ծախսերի ծավալը կազմում է 5173090 դրամ, որը ներառում է ***գրասենյակի վարձը, կոմունիկացիոն ծախսեր, գրենական պիտույքներ, սարքավորումների սպասարկման ծախսեր, բանկային ծախսեր***, սակայն կից ներկայացված «Միկշին» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագրերով նախատեսված ծառայությունների ժամանակահատվածները (նախատեսված են մինչև 5-րդ և 9-րդ ամիսները 2017թ.) և դրանց դիմաց վճարվելիք գումարները էականորեն տարբերվում են ծրագրային դրույթներից, քանի որ գործարքների արժեքը հաշվարկված ըստ ժամանակահատվածի ամիսների էականորեն գերազանցում են օպերացիոն ծախսերի ծավալը: | 1. Կցված է կազմակերպության պարզաբանումը |

ՆԱԽԱԳԻԾ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**____ ապրիլի 2013 թվականի N Մ- - Ա** Մ-4/3.3

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 25-Ի N Մ-1063-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՈՒ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**

(«Այբ» կրթական հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 ապրիլի -ի N 3/3.8-1/-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի ապրիլի -ի N ՎՄ/3-4/-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ  է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի նոյեմբերի 25-ի «Այբ» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Այբ» ավագ դպրոց ծրագրի մասին» N Մ-1063-Ա (2011 թվականի դեկտեմբերի 23-ի N Մ-1089-Ա և 2012 թվականի նոյեմբերի 9-ի N Մ-893-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) ծրագրի 9-րդ կետը «Ա մասնաշենքի կահավորում,» և «կաթսայատան կառուցում, կահավորում,» բառերից հետո լրացնել «գալարավարագույրների ձեռքբերում» բառերով.

2) ծրագրի 10-րդ կետը «Կահավորում» բառից հետո լրացնել «և գալարավարագույրների ձեռքբերում» բառերով:

2. Սահմանել, որ «Այբ» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01558429) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Սամվել Չիթչյան» Ա/Ձ-ի հետ (ՀՎՀՀ՝ 25251847) 2013 թվականի մարտի 20-ին կնքված՝ N 3/13 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող հավելված 1-ում նշված ապրանքների մատակարարում և տեղադրում՝ 2422953 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի  Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ Ո Ր  Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ**

Մ-4/3.3

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

02.04.2013թ № 3/3.8-1/4277-13

Ձեր № ________________

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր- Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 28.03.13թ. N 15/15.8/4241-13 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011թ. նոյեմբերի 25-ի N Մ-1063-Ա (<<Այբ>> կրթական հիմնադրամ) որոշմամբ հաստատված ծրագրում փոփոխություն կատարելու և նույն ծրագրին հարակից գործարքի մասին որոշման նախագծի («Սամվել Չիթչյան» ԱՁ-ի հետ, կնքված պայմանագիր) հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ն. Հարությունյան, հեռ. 595-229

034/8015-13
02.04.2013թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

Մ-4/3.3

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
Հեռ. 50 20 20, 060 54 43 03

N: ՎՄ/3-1/3370-13
2.04.2013թ

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 28.03.2013թ. թիվ 15/15.8/4241-13 գրությանը կից ներկայացված «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի նոյեմբերի 25-ի N Մ-1063-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու ու նույն ծրագրին հարակից գործարքի մասին (Այբ» կրթական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ. Միրումյան

Հարկերի և պարտ. վճարների մեթ. բաժին, հեռ. 060 544652

044/7879-13
2.04.2013թ

---

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**2013 թվականի N Մ- -Ա**

**քաղ. Երևան**

Մ-4/4.1

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 15-Ի N Մ-113-Ա ՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ («ԵՐԵՎԱՆԻ ՌՈՏԱՐԻ ԱԿՈՒՄԲ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի -ի N 3/3.8-1/ -13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի -ի N ՎՄ/3-4/ -13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի փետրվարի 15-ի ««Երևանի ռոտարի ակումբ» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Վաղարշապատ քաղաքի թիվ 16 մանկապարտեզի վերանորոգման 2-րդ փուլ» ծրագրի մասին» N Մ-113-Ա որոշման 1-ին, 2-րդ և որոշմամբ հաստատված ծրագրի 6-րդ, 9-րդ և 10-րդ կետերում «8235600 դրամ» բառերը փոխարինել «7110600 դրամ» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
### ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

Մ-4/4.1


0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26


02.04.13 №3/13.8-1/4251-13

Ձեր № ____________

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր- Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 27.03.13թ. N 15/15.1/4130-13 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի փետրվարի 15-ի N Մ-113-Ա («Երևանի ռոտարի ակումբ» հասարակական կազմակերպություն) որոշմամբ հաստատված ծրագրում փոփոխություն կատարելու հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

044/7925-13

Կատարող՝ Ն. Հարությունյան, հեռ. 595-229

---

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
### ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
### ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

Մ-4/4.1


0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
Հեռ. 50 20 20, 060 54 43 03


ՎՄ/3-1/3294-13
29.03.13

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 27.03.2013թ. թիվ 15/15.1/4130-13 գրությանը կից ներկայացված «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի փետրվարի 15-ի N Մ-113-Ա որոշման և որոշմամբ հաստատված ծրագրում փոփոխություն կատարելու մասին («Երևանի ռոտարի ակումբ» հասարակական կազմակերպություն)» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ. Միրումյան

Անուղղակի հարկերի բաժին, հեռ. 060 544652

044/7748-13

ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ու Մ

_____ մարտի 2013 թվականի N Մ- -Ա Մ-4/4.2

քաղ. Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 17-Ի N Մ-490-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՈՒ ԿԻՑ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(«Երևան իմ սեր» հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով «Երևան իմ սեր» հիմնադրամի 2013 թվականի ապրիլի 2-ի գրությունը ու Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի ապրիլի -ի N 3/3.8-2/-13, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2013 թվականի ապրիլի -ի N -13, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության 2013 թվականի ապրիլի –ի, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության 2013 թվականի ապրիլի –ի, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի ապրիլի -ի N ՎՄ/3-6/-13 և Երևանի քաղաքապետարանի 2013 թվականի ապրիլի -ի եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 17-ի «Երևան իմ սեր» հիմնադրամի կողմից իրականացվող «Սբ. Հովհաննես Մկրտիչ եկեղեցուն կից քաղաքային սոցիալ-հոգևոր ենթակառուցվածքների զարգացում» ծրագրի մասին» N Մ-490-Ա որոշման 1-ին և կից ծրագրի 6-րդ կետում բյուջեն դարձնել 1.000.000.000 դրամ (ծրագրի լրամշակված տարբերակը կցված է):

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարություն, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Երևանի քաղաքապետին:

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
«Երևան իմ սեր» հիմնադրամի տնօրեն
Արշակ Կարապետյան

«02» ապրիլի 2013թ.

«Սբ. Հովհաննես Մկրտիչ և Սուրբ Սարգիս եկեղեցիներին կից քաղաքային սոցիալ-հոգևոր ենթակառուցվածքների զարգացում»
ծրագիր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | «Երևան իմ սեր» հիմնադրամին հանգանակված միջոցներից Երևան քաղաքում՝ Սբ Հովհաննես Մկրտիչ և Սուրբ Սարգիս եկեղեցիներին հարակից տարածքներում վերստեղծել հին Երևանի ճարտարապետությանը բնորոշ ոճով, մոտ 2800 քմ ընդհանուր մակերեսով ցածրահարկ շենքեր: Շենքերում գործելու են մանկական գեղագիտական կենտրոն, համայնքային, միայնակ մայրերի և երեխաների կենտրոններ՝ իրականացվելու են հոգևոր, սոցիալ մշակութային ծրագրեր: Կառուցված շենքերը նվիրաբերվելու են Հայաստանյայց առաքելական եկեղեցուն: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ծրագրի շրջանակներում հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից օգտվելը |
| 3. | Բարեգործը | «Երևան իմ սեր» հիմնադրամի նվիրատուներ |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Երևան իմ սեր» հիմնադրամ, ՀՎՀՀ 00100778<br>Ք. Երևան, Եկմալյան 6, Հեռ.՝ (+37491) 23 04 00 |

1

| | | |
|---|---|---|
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Կոնդ թաղամաս՝ Սբ. Հովհաննես Մկրտիչ եկեղեցուն հարակից տարածք և ք. Երևան. «Զորավյուղ ազգագրական թաղամաս»՝ Սբ. Սարգիս եկեղեցուն հարակից տարածք<br><br>Ծրագիրն ընդգրկում է կրթական, մշակութային սոցիալական բնագավառը |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն կազմում է մոտ 1 000 000 000 (մեկ միլիարդ) ՀՀ դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | Շենքերը հանձնվելու են Հայաստանյայց առաքելական եկեղեցուն ի սեփականություն՝ անվճար: Շահառուներն են Հայաստանյայց առաքելական եկեղեցին, Երևանի կարիքավոր ընտանիքների երեխաները, միայնակ մայրերն ու նրանց երեխաները: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը սկսվելու է 2013թ. մարտի 25-ին և նախատեսվում է ավարտել մինչև 2015 թ. դեկտեմբեր ամիսը |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրով նախատեսվում է կառուցել մոտ 2800 քմ ընդհանուր մակերեսով ցածրահարկ շենքեր Երևան քաղաքի Պարոնյան և Կոզեռն փողոցների միջև ընկած տարածքում՝ Սբ. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու հարևանությամբ և Երևան քաղաքի «Զորավյուղ ազգագրական թաղամասում»՝ Իսրաելյան փողոցի և Հրազդանի ձորի միջև ընկած տարածքում: Սբ. Սարգիս եկեղեցու հարակից տարածքում՝ կառուցվելու է մանկական գեղագիտական կենտրոն համալիր, որտեղ գործելու են նկարչության ստուդիա, քանդակի ստուդիա, գոբելենի և կիրառական արվեստի ստուդիաներ (595 քմ և մոտ 250 քմ օգտագործվող տանիք ), թատրոն և ունիվերսալ դահլիճ՝ մոտ 250 հանդիսատեսի համար՝ անհրաժեշտ տեխնիկական ապահովմամբ, երգչախմբային, պարային խմբակների սենյակներ (մոտ 724 քմ), համակարգչային կենտրոն, գրադարան, տեխնիկական մոդելավորման կենտրոններ (մոտ 590 քմ), վարչական մասնաշենք (մոտ 108 քմ) կառուցվելու է նաև բացօթյա |

ԼՐ·4/4.2



| | | |
|---|---|---|
| | | ամֆիթատրոն, Սբ. Հովհաննես Մկրտիչ եկեղեցուն հարակից կառուցվող շենքերից մեկը նախատեսված է անվճար հատկացնել միայնակ մայրերի և երեխաների կարիքներին (մոտ 400 քմ), ևս մեկ շենք հանդիսանալու է Սբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցուն օժանդակ շինություն՝ անվճար հատկացվելու է Սբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցու հոգևոր սպասավորների և համայնքի հոգևոր կարիքների համար (մոտ 400 քմ):<br>Կառուցվելիք շենքերի շուրջ նախատեսվում է իրականացնել ծառատնկման և կանաչապատման աշխատանքներ, որպեսզի կառուցվելիք շենքերը Սբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցու և միմյանց հետ միասին ունենան միասնական համալիրի տեսք և ծառայեն համայնքի հոգևոր-մշակութային պահանջներին:<br>Աշխատանքները ընթանալու են հետևյալ փուլերով<br>ա) ճարտարապետական նախագծերի (էսքիզային, ճարտարապետական և կոնստրուկտորական մասերի համար) նախագծում (2013 հունվար – մայիս ամիսների ընթացքում) – մոտ 30.500.000 ՀՀ դրամ<br>բ) ընդհանուր շինարարության աշխատանքները (2013 մարտ - 2015 դեկտեմբեր ամիսների ընթացքում) մոտ 950.000.000 ՀՀ դրամ |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների և ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Նախատեսվում է ձեռք բերել ներքոհիշյալ ծառայությունները, որոնց ընդհանուր արժեքը կազմելու է 696 180 000 ՀՀ դրամ:<br>• Ճարտարապետական նախագծերի՝ կառուցվելիք շենքների էսքիզային, ճարտարապետական և կոնստրուկտորական մասերի նախագծում – մոտ 30. 5000.000 ՀՀ դրամ:<br>• Շինարարական ընկերությունների հետ կնքվելիք պայմանագրի շրջանակներում նախատեսվող հողային և շինարարական աշխատանքներ - 950 000 000 ՀՀ դրամ:<br>• Հեղինակային հսկողության և տեխնիկական վերահսկողության իրականացում |

ԼՐ·4/4.2

| | | |
|---|---|---|
| | | • Խորհրդատվական, աուդիտորական ծառայություններ |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ավտոմեքենա՝ 20,000,000 (քսան միլիոն) ՀՀ դրամ: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Երևանի քաղաքապետարան<br>Հայաստանյայց առաքելական եկեղեցի |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | • Սահմանված կարգով եռամսյակային և տարեկան հաշվետվությունների ներկայացում ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով<br>• աշխատանքային ու ֆինանսական հաշվետվությունների ներկայացում «Երևան իմ սեր» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին |



N 4/4.2

N 4/4.2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ
17 հունիսի 2011 թվականի N Մ - 490-Ա
քաղ. Երևան

## «ԵՐԵՎԱՆ ԻՄ ՍԵՐ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՍԲ. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏԻՉ ԵԿԵՂԵՑՈՒ ԿԻՑ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵՎՈՐ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի մայիսի 18-ի N 3/3.8-1/79001-11, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2011 թվականի մայիսի 16-ի N 2904-11, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2011 թվականի մայիսի 17-ի N ՖԲ/ԱեՄ-5/4058-11, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության 2011 թվականի մայիսի 17-ի N 01/3.2/2102-11, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության 2011 թվականի մայիսի 20-ի N 01/3.1/2067-11, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հունիսի 6-ի N ԱԱ/3-4/3762-11 և Երևանի քաղաքապետարանի 2011 թվականի մայիսի 23-ի N 02/34-14538Հ եզրակացությունները,*

***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Երևան իմ սեր» հիմնադրամի կողմից իրականացվող 696.180.000 դրամ արժողությամբ «Սբ. Հովհաննես Մկրտիչ եկեղեցուն կից քաղաքային սոցիալ-հոգևոր ենթակառուցվածքների զարգացում» ծրագիրը (կցվում է):

2. Առաջարկել «Երևան իմ սեր» հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար:

3. «Երևան իմ սեր» հիմնադրամին՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն

մր 4/4.2

այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից կատարված աշխատանքների, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների վերաբերյալ, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ծրագրի կատարման մասին ամփոփ տեղեկություններ:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե և Երևանի քաղաքապետարան:

Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

մր 4/4.2

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
«Երևան իմ սեր» հիմնադրամի տնօրեն
Աշոտ Կարապետյան

«21» հունիսի 2011թ.

«Սբ. Հովհաննես Մկրտիչ եկեղեցուն կից քաղաքային սոցիալ-հոգևոր ենթակառուցվածքների զարգացում» ծրագիր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | «Երևան իմ սեր» հիմնադրամին հանգանակված միջոցներից Երևան քաղաքում՝ Սբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցուն հարակից տարածքում կառուցել մոտ 1710 քմ ընդհանուր մակերեսով երեք շենքեր՝ պահպանելով հին Երևանի ճարտարապետությանը բնորոշ ոճը: Շենքերից մեկում պետք է անվճար գործի կենտրոն կարիքավոր ընտանիքների լողության խնդիրներ ունեցող երեխաների համար (մոտ 517 քմ), մյուսը նախատեսված է անվճար հատկացնել միայնակ մայրերի և երեխաների կարիքներին (մոտ 795 քմ), երրորդ շենքը հանդիսանալու է Սբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցուն օժանդակ շինություն՝ անվճար հատկացվելու է Սբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցու հոգևոր սպասավորների և համայնքի հոգևոր կարիքների համար (մոտ 400 քմ). |
| 2. | Ծրագրի բարեգործական ոլորտման նպատակը | Ծրագրի շրջանակներում հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների օրենքներով սահմանված արտոնություններից օգտվելը |
| 3. | Բարեգործը | «Հայկական բարեգործական ընդհանուր միություն» |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Երևան իմ սեր» հիմնադրամ, ՀՎՀՀ 00100778<br>Ք. Երևան, Եկմալյան 6, Հեռ.՝ (+37491) 23 04 00 |

| | | |
|---|---|---|
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Կոնդ թաղամաս<br>Ծրագիրն ընդգրկում է սոցիալական բնագավառը |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն կազմում է 696 180 000 ՀՀ դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայաստանյայց առաքելական եկեղեցին, Երևանի կարիքավոր ընտանիքների խորհուրդ ունեցող երեխաները, միայնակ մայրերն ու նրանց երեխաները: Ծառայությունները շահառուներին մատուցվելու են բացարձակապես անվճար: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը սկսվելու է 2011թ. հունիսի 15-ին և նախատեսվում է ավարտել մինչև 2013 թ. մարտ ամիսը |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրով նախատեսվում է կառուցել մոտ 1710 քմ ընդհանուր մակերեսով երեք ցածրահարկ շենքեր Երևան քաղաքի Պարոնյան և Կոզեռն փողոցների միջև ընկած տարածքում՝ Սբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցու հարևանությամբ և դրանք, հանձնել Հայ առաքելական եկեղեցու կառավարմանը: Կառուցվելիք շենքերի շուրջ նախատեսվում է իրականացնել բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ, որպեսզի կառուցվելիք շենքերը Սբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցու հետ միասին ունենան միասնական համալիրի տեսք և ծառայեն համայնքի հոգևոր-մշակութային պահանջներին:<br>Աշխատանքները ընթանալու են հետևյալ փուլերով<br>ա) ճարտարապետական նախագծերի (էսքիզային, ճարտարապետական և կոնստրուկտերական մասերի համար) նախագծում (2011 հունիս – օգոստոս ամիսների ընթացքում) – 29.280.000 ՀՀ դրամ<br>բ) հողային աշխատանքներ (2011 հունիս -2011 սեպտեմբեր ամիսների ընթացքում) - 25 650 000 ՀՀ դրամ<br>գ) ընդհանուր շինարարության աշխատանքները (2011 սեպտեմբեր - 2013 մարտ ամիսների ընթացքում) 641 250 000 ՀՀ դրամ |

| | | |
|---|---|---|
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների և ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Նախատեսվում է ձեռք բերել ներքոհիշյալ ծառայությունները, որոնց ընդհանուր արժեքը կազմելու է 696 180 000 ՀՀ դրամ:<br>• Ճարտարապետական նախագծերի՝ կառուցվելիք շենքերի էսքիզային, ճարտարապետական և կոնստրուկտորական մասերի նախագծում – 29. 280.000 ՀՀ դրամ:<br>• Շինարարական ընկերություններից մեկի հետ կնքվելիք պայմանագրի շրջանակներում նախատեսվող հողային և շինարարական աշխատանքներ - 666 900 000 ՀՀ դրամ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չկան: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Երևանի քաղաքապետարան<br>Հայաստանյայց առաքելական եկեղեցի |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | • Սահմանված կարգով եռամսյակային և տարեկան հաշվետվությունների ներկայացում ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման գրասենյակ<br>• աշխատանքային ու ֆինանսական հաշվետվությունների ներկայացում «Երևան իմ սեր» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին |

*ՆԱԽԱԳԻԾ*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**_____ սեպտեմբերի 2012 թվականի N Մ - - Ա**

**քաղ. Երևան**

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԲԵՐԴ ՔԱՂԱՔԻ ԵԿԵՂԵՑՈՒ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի սեպտեմբերի -ի N 3/3.8-1/-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի սեպտեմբերի -ի N և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի սեպտեմբերի -ի N ՎՄՆ/3-4/ եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 429.189.340 դրամ արժողությամբ «Բերդ քաղաքի եկեղեցու շինարարական աշխատանքների իրականացում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից (ՀՎՀՀ՝ 04703401) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Այգեձոր» ՍՊԸ-ի հետ (ՀՀ, քաղ. Երևան, Աճառյան 35/3, ՀՎՀՀ՝ 00815501) 2012 թվականի ապրիլի 18-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Բերդ քաղաքի եկեղեցու շինարարական աշխատանքների իրականացում՝ 429.189.34 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին և Վաղարշապատի քաղաքապետին:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՏՆՕՐԵՆ
ՄՈՒՇԵՂ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԱԲԱՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ
«31» Օգոստոսի 2012 թ.

Բերդ քաղաքի եկեղեցու շինարարական աշխատանքների

# ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է Բերդ քաղաքի եկեղեցու կառուցումը: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակները | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից: |
| 3. | Բարեգործը (բարեգործները) | Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն - 351.085.500 դրամ,<br>Տավուշի մարզի Բերդ քաղաքի քաղաքապետարան – 58.642.500 դրամ,<br>«Այգեձոր» ՍՊԸ – 19.461.340 դրամ |
| 4. | Ծրագրի կատարողը | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ՀՎՀՀ 04703401 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Տավուշի մարզ, ք. Բերդ, բնագավառը՝ հոգևոր |
| 6. | Ծրագրի բյուջեն | **Ծրագրի ընդհանուր բյուջեն 429,189,340 ՀՀ դրամ է, որից՝**<br>2012թ.՝ 3-րդ եռամսյակ – 19,189,340 դրամ, 4-րդ եռամսյակ – 10,000,000:<br>**Ընդամենը 2012թ. – 29,189,340 դրամ,**<br>2013թ.՝ 1-ին եռամսյակ – 20,000,000 դրամ, 2-րդ եռամսյակ – 80,000,000 դրամ, 3-րդ եռամսյակ – 120,000,000 դրամ, 4-րդ եռամսյակ – 20,000,000:<br>**Ընդամենը 2013թ. – 240,000,000 դրամ,**<br>2014թ.՝ 1-ին եռամսյակ – 20,000,000 դրամ, 2-րդ եռամսյակ – 50,000,000 դրամ, 3-րդ եռամսյակ – 60,000,000 դրամ, 4-րդ եռամսյակ – 30,000,000:<br>**Ընդամենը 2014թ. – 160,000,000 դրամ:** |
| 7. | Բարեգործություն ստացողը | Բերդ քաղաքի հավատացյալ ժողովուրդը |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 10 սեպտեմբերի, 2012թ. – 31 դեկտեմբերի, 2014թ. |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է կառուցել եկեղեցի Բերդ քաղաքում՝ 429 189 340 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ:<br>Շինարարական աշխատանքներն իրականացվում են «Այգեձոր» ՍՊԸ-ի (ք. Երևան, Անառյան 35/3, ՀՎՀՀ 00815501) կողմից, պայմանագիր թիվ 03Ճ/012, կնքված 18.04.2012թ.: |
| 10. | Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | Նախատեսվում է իրականացնել Բերդ քաղաքի եկեղեցու շինարարությունը 429 189 340 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ:<br>Եկեղեցին կառուցվելու է Բերդ քաղաքի կենտրոնական մասում՝ Հ. Նահապետ և Լևոն Բեկ փողոցների անկյունամասում, երկարավուն հողատարածքի միջնամասում: Եկեղեցու հիմնական ծավալը հատակագծում է 15.0x19.5մ, արտաքին չափերով ուղղանկյուն է՝ գմբեթավոր սրահով: Արևելյան կողմում լինելու է ավագ խորանը, լինելու է բեմ, 2 ավանդատուն, արևելյան խաչաթևի երկու կողմում՝ մոմավաճառի տարածք: Եկեղեցին ունենալու է 2 մուտք, հյուսիսային խաչաթևի կենտրոնում լինելու է մկրտարանը:<br>Հատակը բազալտե, պատերը արտաքուստ լինելու են տեղական բազալտից, 40սմ բարձրությամբ: Դռները կաղնեփայտից են, պատուհանները բազալտե:<br>Շինարարական աշխատանքներն իրականացվում են «Այգեձոր» ՍՊԸ-ի (ք. Երևան, Անառյան 35/3, ՀՎՀՀ 00815501) կողմից, պայմանագիր թիվ 03Ճ/012, կնքված 18.04.2012թ.: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Չի նախատեսվում |

| | | |
|---|---|---|
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն ՀՀ քաղաքաշինության նախարարության, Տավուշի մարզպետարանի և Բերդ քաղաքի քաղաքապետարանի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Նախատեսվում է տեխնիկական հսկողություն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ճարտարապետաշինարարական և ֆինանսական բաժինների և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Յուրաքանչյուր եռամսյակ հանձնաժողովին կներկայացվեն ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքների մասին տեղեկություններ, ծրագրի ավարտից հետո կտրվի ամփոփ տեղեկություն: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26


7.09.2012թ. № 3/3.8-1/11717-1

Ձեր №

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 04.09.12թ. N 15/15.8/12463-12 գրության՝ կապված Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող <<Բերդ քաղաքի եկեղեցու շինարարական աշխատանքների իրականացում>> ծրագրի մասին ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ ծրագրի 9-րդ կետում բյուջեն անհրաժեշտ է ներկայացնել ըստ կատարվելիք աշխատանքների և համապատասխան գումարների:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ն. Հարությունյան, հեռ. 595-229

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

*0078 Երևան, Հալաբյան 41 ա, հեռ. 380385*
*էլ. փոստ՝ grigor.mouradian@justice.am*

№ 02/5511-12
5.09.2012թ.

**Հայաստանի Հանրապետության կառավարության**
**բարեգործական ծրագրերի համակարգման**
**հանձնաժողովի նախագահ**
**պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

**Ի կատարումն ՀՀ կառավարության 2012թ. սեպտեմբերի 4-ի 15/15.8/12463-12 թվակիր հանձնարարականի**

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Հայտնում ենք, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Բերդ քաղաքի եկեղեցու շինարարական աշխատանքների իրականացում» ծրագրի 7-րդ կետի համաձայն՝ բարեգործություն ստացողը Բերդ քաղաքի հավատացյալ ժողովուրդն է: Այս առումով անհրաժեշտ է հստակեցնել ծրագրի հիշյալ կետի բովանդակությունը:

**Հարգանքով՝** **Գ. Մուրադյան**

Կատարող՝ Իրավական ակտերի փորձաքննության գործակալություն,
Ա. Սարգսյան հեռ. 380-227

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

0015, Երևան, Մ.Խորենացու 3,
Հեռ. 50 20 20, 060 54 43 02

N 2/3-4/3657-12
11.09.2012թ

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 04.09.2012թ. թիվ 15/15.8/12463-12 գրությանը կից ներկայացված «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Բերդ քաղաքի եկեղեցու շինարարական աշխատանքների իրականացում» ծրագրի մասին» որոշման նախագիծը բարեգործական որակելու վերաբերյալ հայտնում եմ.

Կից ներկայացված ծրագրի 3-րդ կետում որպես ծրագրի բարեգործ են նշված Բերդ քաղաքի քաղաքապետարանը (58.642.500 դրամ) և «Այգեձոր» ՍՊԸ-ն (19.461.340 դրամ): ՀՀ կառավարության 2003թ. հունվարի 16-ի N66-Ն որոշմամբ հաստատված «Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի» 5-րդ կետի համաձայն՝ *<u>հարկային արտոնությունների ստացման նկատառումով</u> բարեգործական կարող են որակվել միայն այն ծրագրերը, որոնք իրականացվում են օտարերկրյա պետությունների, միջազգային միջկառավարական (միջպետական) կազմակերպությունների, միջազգային, օտարերկրյա և Հայաստանի Հանրապետության հասարակական (ներառյալ բարեգործական), կրոնական ու նմանատիպ բնույթի այլ կազմակերպությունների, առանձին բարերարների կողմից և նրանց ֆինանսական կամ այլ միջոցների հաշվին:* Ելնելով վերոգրյալից՝ ծրագրի շրջանակներում հարկային արտոնություններ կարող են ակնկալվել միայն Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության տրամադրած գումարների մասով:

Վ. Միրումյան

Անուղղակի հարկերի բաժին, հեռ.060-544652

11.09.2012թ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

______ապրիլի 2013 թվականի N Մ- -Ա
քաղ. Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N Մ-1010-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 2013 թվականի* **ո ր ո շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի դեկտեմբերի 21-ի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Սինոդի շենքին և գեղարվեստի դպրոցին կից ավտոկայանատեղիի կառուցում» ծրագրի մասին» N Մ-1010-Ա որոշմամբ հաստատված ծրագրի 8-րդ կետում «28 փետրվարի 2013թ.» բառերը փոխարինել «01 մայիսի 2013 թ.» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Վաղարշապատի քաղաքապետին:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**21 դեկտեմբերի 2012 թվականի N Մ- 1010 - Ա
քաղ. Երևան**

# ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՍԻՆՈԴԻ ՇԵՆՔԻՆ ԵՎ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑԻՆ ԿԻՑ ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԻԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի դեկտեմբերի 12-ի N 3/3.8-1/16236-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի դեկտեմբերի 14-ի N 01/7830-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի դեկտեմբերի13 -ի N ՎՄ/3-4/13423-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 109.378.790 դրամ արժողությամբ «Սինոդի շենքին և գեղարվեստի դպրոցին կից ավտոկայանատեղիի կառուցում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից (ՀՎՀՀ՝ 04703401) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Վահագն և Սամվել» ՍՊԸ-ի հետ (ՀՀ, քաղ. Երևան, Վազգեն Սարգսյան 102/4, ՀՎՀՀ՝ 01529053) 2012 թվականի հոկտեմբերի 6-ին կնքված եռակողմ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է իր ուժերով, միջոցներով ու նյութերով՝ հաստատված նախագծի և նախահաշվի համաձայն կատարել Սինոդի շենքի և գեղարվեստի դպրոցին կից ավտոկայանատեղիի կառուցման աշխատանքներ՝ 109.378.790 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին և Վաղարշապատի քաղաքապետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ

ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՏՆՕՐԷՆ

ՄՈՒՇԵՂ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԱԲԱՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ

«06» դեկտեմբերի 2012 թ.

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ավտոկայանատեղիի կառուցման

ԾՐԱԳԻՐ

№ 16/3

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է կառուցել ավտոկայանատեղի նախկին Սինոդի շենքին և գեղարվեստի դպրոցին կից հատվածում: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակները | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից: |
| 3. | Բարեգործը (բարեգործները) | Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն |
| 4. | Ծրագրի կատարողը | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ՀՎՀՀ 04703401 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ք. Էջմիածին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին |
| 6. | Ծրագրի բյուջեն | 109,378,790 ՀՀ դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | Մայր Աթոռի միաբանությունը և հավատացյալ ժողովուրդը: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 21 դեկտեմբերի, 2012թ. – 28 փետրվարի, 2013թ.: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է կառուցել ավտոկայանատեղի՝ 2 արգելափակոցներ և պահակակետ, 7096 քմ տարածքի ասֆալտապատում, 1100 մ ճշագծում, 251 քմ տարածքի կանաչապատում, 51 մ ցանկապատի կառուցում՝ 109,378,790 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ: Շինարարական աշխատանքներն իրականացվում են «Վահագն Սամվել» ՍՊԸ-ի, (ք. Երևան, Վազգեն Սարգսյան 10 2/4, ՀՎՀՀ 01529053) կողմից, պայմանագիր՝ 13Շ/012, կնքված 04.10.2012թ.: |
| 10. | Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | Նախատեսվում է կառուցել 2 արգելափակոցներ և պահակակետ, 7096 քմ տարածքի ասֆալտապատում, 1100 մ ճշագծում պլաստմարկեր բաղադրանյութերով, 251 քմ տարածքի կանաչապատում, 51 մ ցանկապատի կառուցում՝ ընդամենը 109,378,790 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Չի նախատեսվում: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառա-վարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն ՀՀ Քաղաքաշինության նախարարության և Էջմիածնի քաղաքապետարանի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Նախատեսվում է տեխնիկական հսկողություն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ճարտարապետաշինարարական և ֆինանսական բաժինների և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Ծրագրի ավարտից հետո կտրվի ամփոփ տեղեկություն: |

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՆՔ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ

# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ թիվ 1

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին), Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության /ՀԲԸՄ / և «Վահագն և Սամվել» ՍՊԸ -ի միջև 06.10.2012թ. կնքված՝ «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Սինոդի շենքին և գեղարվեստի դպրոցին կից ավտոկայանատեղիի կառուցման աշխատանքներ»-ի թիվ 13Շ/012 պայմանագրում փոփոխություն կատարելու մասին

ք. Էջմիածին «05» 04 2013թ.

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին, ի դեմս Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վարչատնտեսական բաժնի տնօրեն Տ.Մուշեղ եպիսկոպոս Բաբայանի, որը գործում է լիազորագրի հիման վրա, այսուհետ՝ «Կողմ-1», Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությունը (ՀԲԸՄ), հանձին ՀԲԸՄ Հայաստանյան ներկայացուցչության կառավարման խորհրդի նախագահ Ա.Ղազարյանի, այսուհետ՝ «Կողմ-2», և «Վահագն և Սամվել»ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Կիրակոսյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Կողմ-3», կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

Հաշվի առնելով, որ 06.10.2012թ. կնքված թիվ 13Շ/012 պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր), նախատեսված աշխատանքների հետագա կատարումն ապահովելու նպատակով անհրաժեշտ է դրանով սահմանված ժամկետը երկարացնել, սույն համաձայնագրով Կողմերը որոշեցին պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունը.

1. Պայմանագրի 3.2. կետում՝ «...մինչև 3 /երեք/ ամիս.» բառերը փոխարինել «....մինչև 01 մայիսի 2013թ.» բառերով:

2. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի կամ նրանց լիազոր ներկայացուցիչների կողմից ստորագրելու պահից:

3. Սույն համաձայնագրում Կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

4. Սույն համաձայնագիրը կնքված է 4 օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Երկու օրինակները մնում են Մայր Աթոռում, իսկ մեկական օրինակներ տրվում են Կողմ-2-ին և Կողմ-3-ին:

5. Կողմերի վավերատարրերը.

| Կողմ՝-1 | Կողմ՝-2 | Կողմ՝-3 |
| --- | --- | --- |
| Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցի<br>Մայր Աթոռ Սբ. Էջմիածին<br>ՀՀ ք. Էջմիածին<br>ՀՎՀՀ 04703401 | ՀԲԸՄ<br>55 East 59 street<br>New York, NY<br>10022-1112 | «Վահագն և Սամվել» ՍՊԸ<br>ՀՀ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 10 2/4<br>ՀՎՀՀ 01529053, |
| Ամերիաբանկ<br>Հ/Հ 1570001075480100 | ՀԲԸՄ Հայաստանյան ներկայացուցչության | «Հայ բիզնեսբանկ» ՓԲԸ<br>Հ/Հ 115004675035 |
| Վարչատնտեսական բաժնի տնօրեն<br>Տ.Մուշեղ եպիսկոպոս Բաբայան | կառավարման խորհրդի նախագահ՝ Ա. Ղազարյան | Տնօրեն՝ Ա. Կիրակոսյան |
| ---------------------------------------- | ---------------------------------------- | ---------------------------------------- |

26 MAR 2013

041